№ 92 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՄԱՅԻՍԻ — 1911 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 4 ՄԱՅԻՍԻ № 92

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողանոցին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Մայիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 7 րուբլի:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Անկարող լինելով առանձին շնորհակալութիւն յայտնել այն բոլորին, որոնք թէ բանաւոր և թէ գրաւոր արտայայտել են իրանց ցաւակցութիւնը

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

մահվան առիթով, սրանով հանգուցեալի ընտանիքը յայտնում է բոլոր ընկերութիւններին, հիմնարկութիւններին և անձնաւորութիւններին իր խորին շնորհակալութիւնը դէպի հանգուցեալի յիշատակն ունեցած ջերմ և զգացված վերաբերմունքի համար։ 465. 1—1

Մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 8-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգեաւ

ԿՈՅՍ ՅԵՓՐՈՍԻՆԷ ԻՇԽԱՆԱՁՆ ԱԲԱՄԵԼԻՔԵԱՆ

ՄԱՅՐԱՊԵՏ Թիֆլիսի հայ Կուսանաց Անապատի, որի մասին միաբան կուսանքոյրերը ցաւակցաբար յայտնում են ազգականներին և ծանօթներին։ Ամբիծքները կը լինեն ամեն երեկոյ, ժամը 7-ին։ Թաղման օրվայ մասին առանձին կը յայտարարվի։ 464. 1—1

Յօգուտ Մանգլիսի ամառային գաղութի, որ կազմված է Թիֆլիսի իգական հինգ գիմնազիաների թուլակազմ և աղքատ աշակերտուհիների համար, ուրբաթ, մայիսի 6-ին
ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ
«ՍՊՕՐՏ» այգում, Միխայլովսկի պրօսպ.։ Զբօսանքի սկիզբը առաւ. ժամը 11-ին։ Ծրագիր.—Եօթնագոյն բազար, երկու երաժշտախումբ, հրավառութիւն, պտի-ժօ, ծաղիկներ, հնդկական բիլիարդ, տոմբոլա, բուֆէտ, օդապարիկներ։ Առ. ժամը 11-ից մինչև ցեր. ժ. 3½-ը մանկահասակ երեխաների համար. ժամը 4—8½-ը աշ.-աշակերտուհիների համար. ժամը 9—12-ը մեծերի համար։ Մուտքի վճարը՝ մեծերի համար 30 կ., երեխաների և աշակերտ-աշակերտուհիների համար 20 կ.։
3—1 463 (ա.օ.) Զբօսանքի կարգադրիչ՝ Զ. ԲՈՒԴՕԼՅ

ԽՆԴԻՐԸ ՔՆՆՎՈՒՄ Է

Վաղը, մայիսի 5-ին, Պետերբուրգում պէտք է քննվի կովկասեան համալսարանի խնդիրը։

Այն յատուկ խորհրդակցութիւնը, որը զբաղված է բարձրագոյն դպրոցների բացման խնդիրներով, նայելու է իր առաջ դրված հարցին երկու տեսակէտից՝ սկզբունքային և ֆինանսական։

Սկզբունքային տեսակէտը մեծ դեր է խաղացել մինչև այժմ և նա է եղել գլխաւոր պատճառը, որ մենք համալսարան չենք ունեցել մեր երկրում։

Եթէ սկզբունքային բնաւորութեան առարկութիւններ տեղի ունեցած չը լինէին, կառավարութիւնը կանգ չէր առնի ֆինանսական դժուարութիւնների առաջ և ինչպէս նա ապահովել է իր միւս բարձրագոյն դպրոցները, նոյն տեսակ կը հոգար և կովկասեան համալսարանի ապահովութեան մասին։

Այդտեղ դեր են կատարել թէ այն ընդհանուր առարկութիւնը, որ Անդրկովկասը դեռ ևս կուլտուրապէս շատ քիչ է զարգացել համալսարան ունենալու համար, և թէ փափկանկատ՝ քաղաքական տեսակէտների հետ կապված՝ մի քանի նկատումներ, որոնք համոզիչ են թւացել իրանց հեղինակների համար մի գեղեցիկ կուլտուրական գործ թաղելու երկար ժամանակով։

Այժմ սկզբունքային խոչընդոտների և արգելքների ույժը թուլացել է, և համալսարանի բացման խնդիրը դրված է կարելիութեան հողի վրա։

Մենք ասացինք թուլացել է, որովհետև հակառակ և բացասական ձայներ լսվում են նաև այժմ և ով գիտէ, թէ ինչ անհեթեթութիւններ պէտք է լսենք մի քանի հռետորների կողմից, երբ կովկասեան համալսարանի օրինագիծը քննվում լինի Պետական Դումայում։

Ամենայն դէպս՝ ուրախալի է, որ պաշտօնական այն խորհրդակցութիւնը, որը ներկայումս նիստեր ունի Պետերբուրգում ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսօյի նախագահութեամբ, սկզբունքով չէ հերքում կովկասեան համալսարանի հաստատութեան խնդիրը և հնարաւոր է գտնում կանգ առնել ֆակուլտէտների առաջնութեան և յաջորդականութեան հարցի վրա և պարզել ձեռնարկութեան ֆինանսական կողմը։

Թիֆլիսի համալսարանի համար փողով և հողով մինչև այժմ յատկացված է 1½ միլիոնի հասնող մի գումար իբրև միանուագ մի նուէր, իսկ տարեկան տուրք խոստացված է 56,300 րուբլի։

Պետերբուրգում կարող են առարկել, որ Թիֆլիս քաղաքի նուիրած 200 դեսեատին հողը դեռևս չէ ծախվում և գուցէ չը ծախվի այն գնով, որ նշանակված է, իբրև միջին թւով հաշւված արժէք, այն է՝ սաժէնին 1 ր. 50 կ.։

Արդարև, դժուար է միանգամից կամ կարճ միջոցում փողի վերածել 200 դեսեատին հողը՝ ծախելով նրան սաժէններով։ Բայց չը պէտք է մոռանալ և այն, որ ներկայումս այդ հողի մերձաւոր կտորներում սաժէնը արժէ 2 ր., 2 ր. 50 կոպէկ և աւելի, և թէև հեռաւոր մասերը մեծ գին չունեն, բայց նրանք կը ստանան արժէք, հէնց որ համալսարանի բացման խնդիրը կը ստանայ դրական լուծում։ Եւ այն ժամանակ՝ ներկայումս նշանակած 1 ր. 50 կ. գինը կը հանդիսանայ իբրև բոլորովին չափաւոր։

Կովկասեան համալսարանի համար գումարներ կը գան զանազան անձերից, ձեռնարկութիւններից ու հիմնարկութիւններից։ Եւ եթէ մինչև այժմ նուիրատուութիւնները չեն երևացել աւելի մեծ ծաւալով, պատճառներից գլխաւորն այն է եղել, որ մարդիկ չէին հաւատում, թէ մօտ է իրականանալու վաղուց տենչացված և բղձացված գիտական տաճարի հիմնադրութիւնը մեր երկրում։

Բնական էր, որ կովկասեան համալսարանի խնդիրը ստանար հերթական հարցի բնաւորութիւն, ինչպէս այդ տեղի ունի ներկայումս, և ահա մենք տեսնում ենք, որ հիմնարկութիւններ և անձեր սկսում են մտածել նուիրատուութիւնների մասին։

Թիֆլիսի վաճառականական դասակարգը այս օրերս որոշեց տալ իր կողմից 25,000 ր., իբրև նախնական մի նուէր, և այդ մասին յայտնեց Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեանին, որը ներկայումս մասնակցում է Պետերբուրգի խորհրդակցութեան։

Նոյնը կանեն և ուրիշները։

Հասարակութեան մէջ շատերը վիճում են, թէ ինչ բաժնից պէտք է սկսի համալսարանը իր գործունէութիւնը Թիֆլիսում՝ բնագիտականից, թէ գիւղատնտեսական, թէ բժշկական, թէ իրաւաբանական։

Այժմ այդ հարցը կովկասցիների համար կորցրել է իր առանձին նշանակութիւնը և սուր բնաւորութիւնը։

Ամենքը ցանկանում են, որ համալսարանի հիմքը դրվի շուտով, որ բաժնից էլ ուզում է լինի այդ։ Բոլոր բաժիններն էլ օգտակար են. բայց գերադասութեան վէճերով զբաղվելը ձգձգում է հարցը։

Ուստի ամենքը հաշտվել են առաջուց, որ ընդունեն ինչ բաժին էլ հնարաւոր համարվի կազմակերպել սկզբում, մանաւանդ որ առաջին բաժնից յետոյ յաջորդաբար հանդէս կը գայ և միւս բաժինների բացման խնդիրը։

Արդեօք Պետերբուրգի խորհրդակցութիւնը կը վերջացնի մայիսի 5-ին կովկասեան համալսարանի բացման խնդրի քննութիւնը թէ կը զբաղվի նրանով նաև իր միւս նիստերում, մենք յամենայն դէպս կը ցանկանայինք հաւատալ, որ կովկասեան համալսարանի խնդիրը մտել է դրական զարգացման շաւղի մէջ և նրա դէմ եղած առարկութիւնները այլևս ուժեղ և ազդեցիկ չեն լինի խանգարելու այդ էական և կարևոր գործը։

Ա. Քալանթար

ԻՏԱԼԻԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 մայիսի

Հռոմ.—Կվիրինալում կայացած ճաշին Թագաւորը իտալերէն արտասանեց հետևեալ բաժակաճառը. «Նորին Մեծութիւն համառուսական Կայսրը Ձեր Կայսերական Բարձրութեան վրա յանձնարարութիւն է դրել՝ յայտնելու իտալական ժողովրդին և ինձ բարեկամութեան ու համակրանքի զգացմունքներ, որոնցով Նորին Մեծութիւնը միանում է Իտալիայի ազգային անկախութեան յիսնամեակի տօնակատարութեան։ Խորապէս զգացված այն անկեղծ բարեկամութեան այդօրինակ հաստատութեան համար, որպիսին գոյութիւն ունի մեր և մեր երկրների միջև, ես սրտանց ողջունում եմ Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնային և շնորհակալ եմ Ձեզանից Ձեր այցելութեան համար։ Իտալիան, որ դարձել է խաղաղութեան և առաջադիմութեան տարրերից մէկը միացած ժողովուրդների մէջ, առանձին գոհունակութեամբ ընդունեց հզօր Միապետի ողջոյնը և բարեմաղթութիւնը, որի նախաձեռնութիւնը ժողովուրդների համար բացեց ճանապարհ դէպի միջազգային խաղաղ համաձայնութիւնները։ Այդ զգացմունքներով բարձրացնում եմ բաժակս և խմում եմ Նորին Մեծութեան և Կայսրուհիների և ամբողջ Կայսերական Գերդաստանի, Ձերդ Բարձրութեան առողջութեան և պանծալի ռուս ժողովրդի համար»։

Նուագախումբը նուագեց ռուսական օրհներգը։

Մեծ Իշխան Բորիս Վլադիմիրօվիչը պատասխանեց ֆրանսերէն այսպէս. «Ձերդ մեծութիւն! Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը, իմ Օգոստափառ Միապետը, բարեհաճեց յանձնարարել ինձ հաղորդել ձեր մեծութեանը Նորին Մեծութեան շնորհաւորանքներն ու բարեմաղթութիւնները փառաւոր տարեդարձի առիթով, որ տօնում է այժմ ձեր մեծութիւնը և ձեր պանծալի երկիրը։ Ես բաղդաւոր եմ արտայայտել ձերդ մեծութեան ինձ յանձնված միսիան և միանալ համակրանքի այն արտայայտութիւններին, որոնց միանում է համայն Ռուսաստանը ամբողջ սրտից։ Սրտանց շնորհակալ եմ ձեր մեծութիւնից իմ և Մեծ Իշխանուհու կողմից սրտագին ու սիրալիր ընդունելութեան համար։ Խմում եմ ձեր մեծութեան, Թագուհի կայսրուհու, Մարգարիտա Թագուհու և ամբողջ Թագաւորական ընտանիքի առողջութեան կենացը. Իտալիային ցանկանում եմ հզօրութիւն ու բարեկեցիկ վիճակ»։

Երաժշտախումբը նուագեց իտալական հիմնը։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 մայիսի

Պետերբուրգ.—Ֆինանսների մինիստրի օգնական Պոկրովսկու նախագահութեամբ կազմվեց միջվարչական մասնաժողով Կովկասում հողային գնահատման գործը կազմակերպելու հարցի քննութեան համար։

Մայիսի 1-ին ժամը 5—7-ը մայրաքաղաքն այցելեց Կայսրը, որին փողոցներում ամենուրեք ժողովուրդը ցնծութեամբ ողջունեց։

Պետական Խորհրդի անդամ Լուկյանովը արձակվեց սինոդի օբեր-պրոկուրորի պաշտօնից։ Նրա տեղ նշանակվեց Պետական Խորհրդի անդամ Սաբլերը։

—

Ուրալսկ.—Կիրգիզի անապատում, Դոսսոր կոչված տեղում, Գուրիեվ քաղաքից 100 վերստ հեռաւորութեան վրա, Ուրալ-Կասպիական Ընկերութեան կոնցեսիայում խփեց ֆոնտան, որ տալիս էր օրվայ մէջ մօտ 600,000 պուդ մաքուր նաւթ։ Ապրիլի 30-ին ֆոնտանը այրվեց։ Ձեռք են առնված միջոցներ կրակը հանգցնելու։

Խարբին.—Նոր փոխարքան կառավարութեանը ներկայացրած զեկուցագրի մէջ բացասաբար է վերաբերվում Մանջուրիայում ժողովրդական միլիցիա կազմակերպելուն, առաջարկելով ժողոված գումարները գործադրել Մանջուրիայի կանոնաւոր զօրքերի թիւը մեծացնելու վրա։

—

Մուկդեն.—Հասարակական կազմակերպութիւնների միութեան հեռագրական կոչի համաձայն, Պեկին մեկնեց գաւառական ջեմստվօյի նախագահը պետական կամաւոր խմբեր ամենուրեք կազմակերպելու մասին ուղերձի կազմելուն մասնակցելու համար։

—

Աղդիս-Աբեբա.—Լիդժեասուն հանդիսաւորապէս հռչակվեց նէգուս։ Երկրում հանգիստ է։ Թագադրութիւնը տեղի կունենայ աւելի ուշ։

—

Բերլին.—«Կեօլնիշէ Ցայտունգին» հեռագրում են Ադդիս-Աբեբայից, որ կայսրուհու եղբայր Րասվօլիէն պետական դաւաճանութեան համար դատապարտվեց մահվան պատժի։

«Տէգլիխէ Րունդշաու»-ի մէջ Ստոլիպինի մասին կոմս Պֆէյլը գրում է. «Ստոլիպինի պաշտպանողական ճառը, որ աչքի է ընկնում անսովոր պարզութեամբ, կուսակցութիւններից որևէ համակրանք որոնելու բացակայութեամբ և անպայման վճռականութեամբ, պարզ հասկացողութիւն է տալիս այդ պետական գործողի մասին և ոգևորութեամբ յիշեցնում է սահմանադրական իրաւունքի առիթով Բիսմարկի արտասանած լաւագոյն ճառերը։ Գերմանիային շատ է գոհացնում այն գիտակցութիւնը, թէ հարևան պետութեան արտաքին ու ներքին քաղաքականութեան գլուխ կանգնած է այնպիսի պետական գործիչ, որ շարունակ ձգտում է սոսկ իր հայրենիքի բարեկեցութեանը»։

—

Լոնդոն.—Գերմանական կայսերական զոյգը եկաւ Վիկտորիա կայարանը ժամը 1-ին և կայարանում դիմաւորվեց Թագաւորից, Թագուհուց, Թագաւորական գերդաստանի անդամներից, գերմանական դեսպանատան բոլոր պաշտօնեաներից և գերման գաղութից։

—

Մադրիդ.—Արտաքին գործերի մինիստրը և ճապոնական դեսպանը ստորագրեցին սպանական-ճապոնական առևտրական պայմանագիրը։

ՄԱՐՕԿԿՕՅԻ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 մայիսի

Վիեննա.—«Նէյէս-Վինէր-Տագէբլատ»-ը մարօկկեան հարցի առիթով գրում է. «Մարօկկօյի վերաբերմամբ սկսված վէճերը դեռ ևս շարունակվում են մեծ կրքոտութեամբ, թէև եւրօպական բոլոր կառավարութիւնների կարծիքով Ֆրանսիայի վստահացումները՝ Մարօկկօյում վարած նրա գործելակերպի մասին՝ արժանի են վստահութեան։ Այդ կէտում ոչ մի տարաձայնութիւն չը կայ պետութիւնների միջև։ Բոլոր յուզիչ տեղեկութիւնները սոսկ ֆանտազիայի պտուղ են»։

—

Կեօլն.—«Կեօլնիշէ Ցայտունգ»-ին հեռագրում են Բերլինից. «Россія»-ի յօդուածով վերջնականապէս հերքվում է այն առասպելը, թէ Ռուսաստանը ճնշում է գործ դնում մարօկկեան հարցում։ Գոհունակութեամբ ընդգծում են, որ մարօկկեան և ուրիշ միջազգային հարցերում Բերլինի և Պետերբուրգի միջև հայեացքների տարբերութիւն չը կայ»։ Ապա լրագիրը հերքում է անուանում այն տեղեկութիւնը՝ իբր Գերմանիան դիմել է Աւստրո-Ունգարիայի միջնորդութեանը, Ֆրանսիայի՝ Մարօկկօյում ունեցած գործողութիւնների առիթով։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 մայիսի

Բերլին.—«Россія»-ի յօդուածը քիչ է գոհացնում մամուլին, առանձնապէս այն յայտարարութիւնը՝ թէ ռուս-գերմանական բանակցութիւնները Հիւսիսային Պարսկաստանի մասին կապում են մարօկկեան հարցի հետ։ Ընդհակառակն, արտաքին գործերի մինիստրութեանը մօտ շրջաններում Պետ. Հեռ. Գործ. թղթակցին յայտնել են, որ «Россія»-ի յայտնածը չափազանց համակրանքով են ընդունել քաղաքական շրջանները։

—

Ցետինիէ.—Թուրքերը խափանեցին զինադադարը, յարձակվելով Կաստրատում առնաուտների վրա։ Խօտում հրդեհված են քրիստոնեաների չորս տներ։ Կաստրատում Դեչիչի մօտերը կռիւը շարունակվում է։ Հետևանքն առայժմ յայտնի չէ։

—

Ցետինիէ.—15-ժամեայ կռւից յետոյ թիւրքաց զօրքերը գրաւեցին Դեչիչը։

—

Ուսկիւբ.—12 բատալիօն բէդիֆներ, որոնք եկել էին Սալոնիկից, բերվեցին այստեղ միւս զօրքերի հետ միասին մասնակցելու համար Կոսսովայի դաշտում զօրախաղերին, որոնց ներկայ է լինելու նաև սուլթանը։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պօլիս, 22 ապրիլ

Այսօր ազգ. ժողով պիտի գումարուէր, սակայն յետաձգուեցաւ վերջին պահուն, ատենապետ Ազարեան էֆ.-ի եղած սխալ ու ապօրէն թելադրութեան մը վրայ։ Քաղ. ժողովի աշխարհական անդամներէն ոմանք վերջին օրերս Կ. Պօլիսէն մեկնած ըլլալով՝ մեծամասնութիւնը կորսուած է և ստիպողական, անհրաժեշտ ու անմիջական պէտք կայ վարչութեան ընտրութիւնը կատարելու, ուստի շատ պաղ տպաւորութիւն ըրաւ ժողովին յետաձգման լուրը, որ պարզապէս ապշահար ըրաւ երեսփոխանները անխտիր բոլորն ալ։ Հաւանական է, որ առաջիկայ շաբթու գումարուի և ստիպողաբար կատարուի վարչութեան ընտրութիւնը։

Գալով պատրիարքական ընտրութեան՝ յապաղեցնելու կողմն է մեծամասնութեան տրամադրութիւնը, ինչ որ կերևայ թէ մեծապէս անհանգիստ կընէ Երուանդ Տէր-Անդրէասեանը («Ժամանակի» խմբագիր), որ յոյս ունի իր հայրենակից Նիկոմիդիոյ առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոս Յովակիմեանը պատրիարք ընտրել տալու, ոչ թէ անոր համար, որ բացառիկ արժանիք մը ունի կամ պատրիարքութեան մեծ յարմարութիւն, այլ անոր համար, որ իր մարդն է և կրնայ իր ազդեցութեան տակ առնել, մինչ արդի տեղապահին մտերիմ ճանչցուած է «Բիւզանդիոնի» խմբագիրներէն Սեբիկ Մուպահեաճեան, որուն ազդեցութեան տակ գտնուած ըլլալ կը կարծուի Մանկունի, որ երբէք ազդուելու հակում ունեցող անձ չէ եղած իր կեանքին մէջ։ Ասոր համար ահա Երուանդ Տէր-Անդրէասեան, «Ժամանակի» մէջ, քողարկեալ ակնարկութիւններով կուզէ հարուածել տեղապահը։

Մասնաւորապէս իր մէկ խոշոր փորձանքն ալ սա է, թէ արդեօք Մուպահեաճեան ուղղակի տեղապահէն լուրեր առնելով «Բիւզանդիոն» կը նպաստաւորուի և «Ժամանակ» բացը կը մնայ։ Ասոր համար ահա տեղապահը կուզէ վարկաբեկել ասոր-անոր ազդեցութեան ակնարկելով։

Հետևաբար, հիմա Մանկունի սրբազանն ալ լրագրական պայքարի մը խաղալիք ըլլալու սպառնալիքին տակն է։

⁂

Ապրիլ 2-ին խառն ժողովի գումարման պահուն, Կաղը-գիւղի երկու ուսուցիչներ, որոնք վերջին վարչութեան գլխուն պատուհաս դարձած էին, ժողովատեղիին դուռները բռնաբարելով յարձակած են և տագնապի մատնած են ժողովականները, որոնք կատակերգական շփոթի մը մատնուած՝ անմիջապէս փախուստի միջոցներ որոնած և ծակամուտ եղած են։

«Ազատամարտ» այս անպատկառ շարժումը «արդար պահանջ» որակած է, իր անիշխանական շարժմանց հովանաւորողի դերին հաւատարիմ։

Վերջին անգամ իրենց եղած պզտիկ գլխշողութիւն մը, ուսուցչաց օգնութեան սնտուկէն 35 ոսկի նպաստ տրուիլը, զիրենք քաջալերած է։

Այս պարագան պատրիարքարանը խնամով պահեց հասարակութենէն իր տկարութիւնը չխոստովանելու համար, սակայն ահա արդիւնքը ցոյց կուտայ, թէ ատիկա որքան քաջալերական եղած է այդ պարոններուն համար, որոնք այդ գլխշողութիւնը տկարութիւն համարելով՝ սպառնալիքով իրենց գործը կարգադրելու ձեռնարկներ կընեն։

Շաւայլ

Յ. Գ.—Դուրեան պատրիարքի՝ կառավարութենէն ուղղակի ամսական խնդրելու ձեռնարկը ապօրէն համարած էի հիմնուելով սահմանադրութեան որոշ մէկ յօդուածին վրայ։

Ասոր ի պատասխան՝ դուրեանական մը «Մշակի» փութացած էր պաշտպանողական մը հասցնել, առարկելով թէ Դուրեանի նախորդներն ալ նոյն կերպով պետութենէն ամսական ստացած են։ Կը հարցնեմ իրեն, թէ արդեօք գիտէ՞, թէ Իզմիրլեանի ի՛նչ պայմաններու մէջ 2,000 ղրշ. կապուած է։ Գիտէ՞, թէ Խրիմեանի ամսականը ո՛վ կապել տուած է։

Միայն Օրմանեանի պարագան կը յիշէ, և կարծեմ թէ հոն ալ դէպքերը կը խեղաթիւրէ, զի որչափ գիտենք՝ Օրմանեան անձնապէս ինքը դիմում չըրաւ և ամսական չխնդրեց, այլ կառավարութիւնը՝ սովորութեան վրայ հիմնուած՝ այդ ամսականը յատկացուց։ Նոյն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ԴԱՇՆԱԿՑ. XV ԿՈՆԳՐԷՍԸ ՀՌՈՄՈՒՄ

Հռոմ, 5 մայիսի (ն. տ.)

Երէկ, հինգշաբթի, մայիսի 4-ին, Հռոմում, պատմական Կապիտոլիում իտալական թագաւոր Վիկտոր Էմմանուէլի, արքայական ընտանիքի, իտալական մինիստրների և բարձրաստիճան անձանց ներկայութեամբ ցերեկվայ ժամը 11-ին կայացաւ փառահեղ և հանդիսաւոր բացումը միջազգային մամուլի դաշնակցութեան XV կօնգրէսի։

Կօնգրէսիստների թիւը այս տարի շատ է, 500-ից աւելի։ Հնարաւորութիւն չունեմ դեռ հաղորդելու մանրամասնութիւններ, որովհետև ես հէնց դեռ երէկ առաւօտեան ժամը 6-ին հասայ Հռոմ և հազիւ կարողացայ գալ մամուլի բիւրօն, ստանալ պրօգրամները, տոմսերը, ժէտօնը և այլն ու ժամը 11-ից մի փոքր առաջ հասնել Կապիտոլի։

Ուրախալի և խորհրդաւոր է, որ մամուլը Եւրօպայում արդէն փաստօրէն յաղթանակել է մի դիրք, որի ներկայացուցիչները հաւասար ոյժ և նշանակութիւն ունեն, ինչպէս պետական բարձրաստիճան և պատասխանատու մարմիններ։

Ամբիօնի վրա բազմած է մամուլի միջազգային դաշնակցութիւնների շաղկապի հիմնադիր և կենտրօնական կօմիտէտի նախագահ ծերունազարդ Վիլհէլմ Զինգէր՝ ձախ թևից իր մօտ ունենալով իտալական մինիստր (գիտութիւնների և արուեստի) Luigi Luzzati, որ XV կօնգրէսի պատուաւոր նախագահն է, իսկ աջ թևից՝ այս կօնգրէսի նախագահ պարլամենտի անդամ Salvatore Borzilai. Սրանց կողքին ամբիօնի վրա բազմած են՝ ընդհանուր քարտուղար և կենտրօնական կօմիտէտի փոխ-նախագահ Վիկտոր Տօնէ, կողքին՝ այս կօնգրէսի քարտուղար, իտալական պարլամենտի անդամ Principe Leonne. Միւս կողմից՝ կենտրօնական կօմիտէտի անդամ-գանձապահ Գէորգ Շվայցար, կողքին՝ իտալական պարլամենտի անդամ Enrico Buonanno. Սրանց հանդէպ, յատուկ բազմոցներում նստած են իտալական թագաւորը, իւրայիններով շրջապատված, ապա կօնգրէսիստները։

Ամբողջ Կապիտոլի շուրջը և ընդարձակ սանդուղների բոլոր աստիճանների վրա, որոնք զարդարված են ծաղիկներով, կանգնած են թրերը հանած զինւորներ և տալիս են կօնգրէսիստներիս զինուորական ողջոյն։ Հրապարակը լիքն է ժողովրդով։

Հանդէսը բացեց գիտութիւնների և արուեստների մինիստր Luigi Luzzati, որի ողջոյնը տպագրված է իտալերէն, անգլիերէն, գերմաներէն ու ֆրանսերէն և որ բաժանվեց կօնգրէսիստներիս։

Այս ճառին պատասխանեց Վ. Զինգէր, իրան յատուկ անդորր, նշանաւոր ոճով և իմաստով, որի իւրաքանչիւր նախադասութիւնը աղմկալից ծափահարութիւններով էր ընդհատվում։ Երկու ժամվայ ընդմիջումից և նախաճաշից յետոյ, նոյն տեղը սկսվեց կօնգրէսի առաջին նիստը։

Ժամը 22-ին էլ Կապիտոլիում կայացաւ խնճոյք, Հռոմ քաղաքի կողմից ի պատիւ կօնգրէսիստների։

Առ այժմս ես չը պիտի գրեմ ձեզ նիստերի մանրամասնութիւնները. կը հաղորդեմ՝ կօնգրէսը վերջանալուց։ Այժմս միայն պէտք է կրկնեմ, որ թէ պետութիւնները և թէ ժողովուրդը մամուլին տուել են մի մեծ դեր և նրանից սպասելիքը շատ մեծ է։

Սոսկ թամաշայի, հանդիսատես չեն ոչ ժողովուրդը և ոչ պետութիւնները։ Նրանք ակնկալութիւններ ունեն, սպասելիքներ ունեն մամուլից և անկեղծ փայփայում, գրգռվում ու մեծարում են մամուլին։

Ուրիշ-ուրիշ կօնգրէսներ էլ են շարունակ կատարվում ամեն տեղ, բայց, ասացէք, որ կօնգրէսն է գէթ մօտաւորապէս այնպէս մեծարվում պետութիւններից և ժողովրդից, ինչպէս մամուլի կօնգրէսները։ Սակայն, եթէ ձեռքներս խղճներիս վրա հարցնենք մեզ, թէ արդեօք մամուլը հասել է իր կոչման այդ աստիճանին, մամուլն արդեօք անկաշառ և անաչառ ծառայում է ժողովրդին և նրա կառավարութիւններին,—մեր պատասխանը, անշուշտ, համարեա բացասական է լինելու։ Եւ ահա միջազգային մամուլի դաշնակցութեան շաղկապն է, որ ձգտում է համաշխարհային մամուլը բարձրացնել իր կոչման։ Սրա որոշումներն են, որ պարտաւորեցնում են մամուլի գործիչներիս սրբութեամբ կատարել մեր ստանձնածը, սուրբ և անբիծ պահել մամուլի դրօշակը։

Առաջին կարգի luxe expresse-ներում ննջարան վագոնների տոմսակներ ամբողջ Իտալիայում մինչև յունիսի 1-ը և նոյնանման տոմսակ իտալական ջրերի վրա նաւերում։ Ապա շարունակ խնճոյքներ, հրաւէրներ՝ սկսած թագաւորից, նրա մինիստրներից, քաղաքներից և ժողովրդից։ Ճանապարհի վրա սփռում են ծաղիկներով, փողոցները զարդարում դրօշակներով և ժողովուրդը դիմաւորում է ձեզ ծաղիկներով, ծափահարութիւններով ու կեցցէներով։

Երէկ երեկոյեան Կապիտոլիում, ինչպէս ասացի, ժամը 22-ին Հռոմի քաղաքագլխի հրաւէրն էր։ Ամբողջ Կապիտոլը պէտք է պտտէինք և ապա վայելէինք, ընդմիջելով մեր պտոյտները, կերուխումով։ Բայց ես այնպէս էի յափշտակվել կլասիքական այս երկրի հարստութիւնով, որ ամբողջ հռոմէական պատմութիւնը աչքիս առաջ էի տեսնում։ Ի զուր էի որոնում հազարաւոր արձանների, անդրիների, պատկերների մէջ հայ թագաւորների, կայսրների արձանները։ Փափագում էի գտնել Լուկուլլոսի Տիգրանակերտից բերած հայոց դրօշակը։ Կատակոմբաներում էլ-է եղել պատրաստված ճոխ սեղան, բայց ես ստամոքսային քաղց ու ծարաւ չէ, որ պէտք է ուզենայի այստեղ յագեցնել։ Ինձ չէր հմայում ոչ շամպայնի հեղեղը և ոչ իսկ իտալական սեղանը։ Կէս գիշերից շատ անց էր, որ յոգնած դուրս եկայ Կապիտոլիից։

Այսօր, ուրբաթ, առ. ժամը 9-ին, յատուկ գնացքով կօնգրէսիստներս հրաւիրված էինք Հռոմից մի ժամ երկաթուղով հեռու՝ ճանապարհի վրա Frascati, դիտելու հնութիւններ։ Նախաճաշեցինք Villa Tornlonia-ում, ապա կառքերով գնացինք Grotta Ferrata և հարևան ամրոցները, տաճարները, ուր մի յունական վանքի պարտիզում հիւրասիրվեցինք համեղ թխուածքներով և խմիչքով։ Նշանաւոր են և այս վանքի տակ եղած կատակոմբաները։

Նոյն օրը երեկոյեան Consulta-ում արտաքին գործերի մինիստրի հրաւէրն էր ժամը 21-ից մինչև 1-ը։ Փարթամ Հռոմն այստեղ էր իր գեղեցկուհիներով։ Հրաշալի կօնցերտ էր և ապա ընթրիք։ Վաղը, շաբաթ, ժամը 16-ին թագաւորի հետն ենք։

Իտալիայում ժամացոյցը (գիշեր և ցերեկ) ունի 24 ժամ։ Ժամը կէս գիշերվայ 1-ից է սկսվում։ Օրինակ՝ եթէ ասեմ ժամը 17-ից 10 րոպէ անց, նշանակում է երեկոյեան 5 ժամից 10 րոպէ անց։

Տ. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂ. ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՅԵՏԱՁԳՈՒՄԸ

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի թեմի կաթողիկոսական պատուիրակների ընտրութիւնը նշանակված էր ամսիս 8-ին։ Սակայն Թիֆլիսից մի խումբ անձինք, գլխաւորապէս վաճառական դասակարգից և ինտելիգենցիայից, դիմել էին խնդրագրով թէ Եփրեմ եպիսկոպոսին և թէ սրբազան տեղապահին, խնդրելով յետաձգել ընտրութիւնները։ Այժմ, ինչպէս մեզ հաղորդում են, սրբազան տեղապահից եկած մի հեռագրի համաձայն, պատուիրակների ընտրութիւնները յետաձգված են հոկտեմբերի վերջին։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ

Ահա վեցերորդ ամիսն է, որ Հաւլաբարում, Էջմիածնեցոց եկեղեցական դպրոցի շէնութեան մէջ, Ժողովրդական Համալսարանը, մի խումբ բանւորների առաջարկութեամբ, բացել է կիրակնօրեայ գրագիտական դպրոց հայերէն և ռուսերէն լեզուներով, ուր պարապմունքները լինում են ցերեկով։ Ուսուցիչները՝ Գ. Գարդիշեան և Ռօստոմեան՝ պարապում են ամենայն բարեխղճութեամբ։ Որպէսզի հասակաւոր աշակերտ-բանւորների համար ձանձրալի չը լինի լոկ գրագիտութեամբ զբաղվելը, ուսուցիչները ունենում են նաև բանաւոր պարապմունքներ, զրուցատրութեան ձևով, զանազան առողջապահական-գիտական հարցերի մասին, որ և մեծ հետաքրքրութեամբ լսում են աշակերտ-բանւորները։

Ուշադրաւն սակայն այն է, որ աշակերտ-բանւորների թիւը սպասված քանակին չէ հասնում։ Ուստի կրկին անգամ յիշեցնում ենք զանազան բազմամարդ հիմնարկութիւններում և գործարաններում գտնվող գրագէտ բանւորներին, որ նրանք իրանց անգրագէտ ընկերների մէջ տարածեն, սովորեցնեն այդ գրագիտութիւն տարածող դպրոցի տեղն ու նշանակութիւնը. չէ՞ որ անգրագէտը չէ կարդում, հետևապէս և չէ կարող տեղեկութիւն ունենալ նրա համար բացված դպրոցի մասին լրագրում թէկուզ յատկապէս տպված յայտարարութեան միջոցով անգամ. ապա ուրեմն, գրագէտ բանւորների վրա դրվում է բարոյական պարտաւորութիւն իրանց շրջանի անգրագէտ ընկերների մէջ տարածելու այդ գաղափարը։

ՄԱՅՐԱՊԵՏ ԻՇԽԱՆԱԶՆՈՒՀԻ ՅԵՓՐՈՍԻՆԷ ԱԲԱՄԵԼԻՔԵԱՆ

Մայիսի 2-ին վախճանվեց Թիֆլիսի հայ Կուսանոցի մայրապետ իշխանազնուհի և աւագ-սարկաւագուհի կոյս Յեփրոսինէ Աբամելիքեանը, որ ծնվել է 1834 թ. դեկտ. 10-ին, ընդունել է կուսակրօնութիւն 1847 թ. և ընտրվել մայրապետ 1904 թ. մարտի 31-ին։

Հանգուցեալը կատարել է և ձեռագործի վարժուհու պաշտօն Յովնանեան դպրոցում ձրիաբար և իբրև մայրապետ եղել է այդ դպրոցի հոգաբարձութեան անդամ։ Իր մայրապետութեան օրով, իր ծախքով վերանորոգվեց Կուսանաց Անապատի եկեղեցին՝ ծախսելով 13,600 ր. և շինելով իր համար ևս գամբարան եկեղեցու դրսի սանդուխքների ներքոյ։ Բացի դրանից հանգուցեալը զանազան ժամանակներ մանր բարեգործութիւններ է արել, տալով ձրի ճաշարանի, չքաւոր աշակերտուհիների, Հայուհեաց Որբախնամ Ընկ. Հայուհեաց Բարեգ. Ընկ. և այլոց օգտին մօտ 2000 րուբլի։

ԷՋԵՐ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂ ՍԵՐՆԴԻ ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆԻՑ

III

Մեր դպրոցներում աւանդում են մեռած լեզուների հետ և այլ բազմաթիւ առարկաներ, կամ նրանց որոշ մասեր, որոնք բացի ոչ մի նպատակ չունենալուց, ոչ մի օգուտ չը տալուց միայն բթացնում և զզուեցնում են սովորողներին. իսկ կեանքի, բնութեան հետ կապված առարկաներն այնպէս չոր ու ցամաք և կեանքից ու բնութիւնից կտրված են աւանդվում, որ աշակերտի համար նոյնիսկ պարզ չէ լինում նրանց աւանդելու նպատակը։

Մեր դպրոցական առարկաների մէջ առաջին տեղն է բռնում կրօնը. բայց դժուար կարելի է գտնել մի առարկայ, որ այնչափ սխալ և կեղծ դրված լինի, որ այնքան աննպատակ և անշնորհք աւանդվի, որքան այդ առարկան։ Սկսվում է նա ասորական Գէլգամիշա վէպի կտորներից՝ աշխարհի ստեղծագործութեան մասին և հէնց երրորդ չորրորդ դասերից աւանդում է անհնազանդութեան, եղբայրասպանութեան դէպքեր՝ դրախտից վռնտվելու և Կայէնի տանջանք ների հետ։

Հէնց սկզբից Աստուծոյ մասին ... է այնպիսի թիւր հասկացողութիւն ... նկարագրվում է այնպիսի մի բռն վրէժխնդիր, աչառու և անգութ, որ ծող մանուկը երբէք չէ կարող հաշտ ուսածի հետ քրիստոնէական վարդապետ թեան հակառակ ներշնչումները։

Այդ բոլորից յետոյ շատ բնական է, քրիստոնէական վարդապետութիւնը չէ րող աւանդվել իր սկզբնական մաք թեամբ և ստանում է լեգենդար նկար ների և ճշմարտութիւնից շեղված մուածքների կերպարանք։

Ուղիղ չէ մեկնվում աւետարանական ա քը, քրիստոնէական հինգ պատգամն այդ կրօնի հաշտարտութեան շրջանակը, այդ բոլորի փոխարէն այնպիսի խառն երկրորդական խնդիրներով ենք խճո առարկան, որ անմեղ մանուկը փոքր սակից արդէն սկսում է թերահաւա թեամբ վերաբերվել իր լածներին և անգամ իր խելացի և տեղին տուած ցերով ապշեցնում է ծնողներին և դաստ րակներին։

Եթէ ամենքից անխտիր չենք լսում հարցերը, դա առաջ է գալիս միմիա դպրոցից արտաքսվելու երկիւղից և ոչ ունկնդիրների մէջ կենդանի հաւատ ծարծելուց։

Այո, այդ առարկան այնքան վատ է ւանդվում, որ կարելի էր հարցական դն թէ որն է լաւ. ներկայ ձևով աւանդե թէ այդ առարկան ծրագրից հանելը։

Երբ հարկաւոր կը լինի, մենք կը բերեն բազմաթիւ փաստեր, որոնք կը հաստատե ասածներս, որոնք ցոյց կը տան, թէ մեր ա ւանդածը որքան հակառակ է Աւետարան ոգուն ու հաշտարտութեան. իսկ այժմ լսում ենք, սպասելով կրօնուսոյցների հար ցերին և կարծիքներին։

Դրանից լաւ վիճակի մէջ չէ մայրենի զուի և քերականութեան դասաւանդութիւ Լեզուական գանձերը դեռ այսօր էլ անմ չելի են թէ ուսանողներին և թէ ուսուցի ներին ու հեղինակներից շատերին։

Ինչո՞ւ։

Որովհետև դրանցից շատ քչերն են ապր ժողովրդի մէջ, քչերը գիտեն իրանց հա րենի բնութիւնը և քիչ բան են գտել այդ մասին մեր դասագրքերի մէջ։

Հայոց լեզուի գանձարանը հայ ժողո վուրդն է իր միջավայրով. և ոչ թէ այս կամ այն գաւառի, այս կամ այն նահանգի ժո ղովուրդը, այլ ամբողջ հայ ազգը, որը տարբեր կլիմաների, աշխարհագրական տարբեր պայմանների մէջ ապրելով՝ տարբեր լեզուական պաշար է իւրացրել և մշակել։ Լեզուն հարստանում է բնութեան դիտողու թեամբ, փոխադարձ յարաբերութեան ըմբռնողութեամբ և կերպարանաւորութեամբ։ Նոյն դրդիչների հետ է կապված մարդկանց մտածելու կերպը, կենցաղավարութիւնը, հոգեբանութիւնը։ Ի՞նչ աշխատանք է կատարված այդ հարուստ շտեմարանի գանձերից օգտվելու համար։

Շատ քիչ։

Կատարված աշխատանքն էլ մեծ մասամբ անտես է առնված մեր հեղինակներից և դասագիրք կազմողներից։ Լեզուական հարստութիւնը դեռ մնում է անմշակ և մուտք չէ գործել մեր դասագրքերում։ Եւ այդ հարստութեան կարևորութիւնը չէ զգացվում միմիայն այն պատճառով, որ մեր դպրոցները դեռ կտրված են իրական կեանքից ու կենդանի բնութիւնից։

Լեզուն աւանդվում է գլխաւորապէս դաստիարակչական և ոչ այնքան լեզուագիտա կան նպատակներով։ Քերականութիւն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑ ԿՈՎԿԱՍՈՒՄ

(Զեկուցում Ալ. Քալանթարի)

VII*)

Երկրագործական-տեխնիկական կազմակերպութեան այնպիսի կարևոր մի ճիւղ ինչպէս է Անդրկովկասում հողերի ոռոգումը, չէ կենտրօնացրել իր վրա հիւսիսի բարձրագոյն դպրոցներում այն ուշադրութիւնը, որին նա արժանի է մեր երկրի գիւղատնտեսական արդիւնաբերութեան ընդարձակ զարգացման համար։ Թէ հողերի ոռոգման, առուների ցանցեր շինելու, յարմարութիւններ ստեղծելու և ջրային տնտեսութեան կազմակերպութեան խնդիրները, թէ Արևելքում—Պարսկաստանում, Թիւրքիայում և Եգիպտոսում—գոյութիւն ունեցող ջրաբաշխական շինարարութեան բնորոշ հոյակապ օրինակները մնում էին մինչև այժմ չուսումնասիրված և չը շահագործված այն ուսեալ գիւղատնտեսների կողմից, որոնց վիճակված է գործել երկրի մէջ և ղեկավարել գիւղատնտեսական շինարարութիւնը զանազան տեղերում։

Լեռնային Կովկասը իր ձորերով ու իջուածքներով և իր արագավազ հոսանքներով անհրաժեշտ է դարձնում գործադրել գետափերի ամրացման մի շարք միջոցներ և անտառապատել գետերի ակունքներն ու լեռնալանջերը։

Լեռնային արօտների կամ եայլաղների ընդարձակ տարածութիւնները ստեղծել են արօտային տնտեսութեան մի եղանակ, որը անյայտ է Ռուսաստանի ներքին նահանգներին և որը բնորոշ է իր արտայայտութիւններով երկրի զանազան մասերում։

Եւ անկասկած՝ այն ամենը, ինչ որ ուսումնասիրված և իւրացված կը լինի ակադեմիական գիտութեան կողմից մեր երկրում, կարող է գործադրութիւն ունենալ նոյնպէս Անդրկասպեան երկրում և Միջին Ասիայում, որոնց պայմանները բաւականաչափ նման են Անդրկովկասի պայմաններին և թելադրում են գիւղատնտեսական օգնութեան եղանակների ինքնատիպ մշակում։ Միջին Ասիայի պերճ բնութիւնը՝ հարաւային թանգագին կուլտուրաներով՝ սպասում է հեղինակաւոր գործողների և ղեկավարների՝ ցոլացնելու երկրի բեղմնաւոր ոյժը, իսկ այդպիսի անհատներ չեն կարողացել տալ հիւսիսի ճեմարանները հասկանալի պատճառներով։

Այդպիսի գործողներ կոչված է տալու կովկասեան բարձրագոյն դպրոցը։

VIII

Ես կարող եմ հակիրճ խօսել Անդրկովկասեան երկրի հանքագործական և ձկնային հարստութիւնների մասին։ Նրանք բաւականաչափ յայտնի են։ Ես կը լիանամ միայն նրանց յիշատակելով։

Նաւթը, որ վայելում է համաշխարհային հռչակ և նուաճում է մեր երկրում նորանոր տարածութիւններ՝ հորեր փորելու համար, հանդիսանում է իբրև տեխնիքական արդիւնագործութեան խոշորագոյն ճիւղերից մէկը, որը ազդում է նաև մեր երկրի ֆինանսական գործունէութեան միւս կողմերի վրա։ Ապշերօնի, Գրօզնիի, Մայկոպի և ուրիշ նոր երևացող նաւթաշրջանները կարօտ են ղեկավար գործողների, որոնք մասնագիտօրէն պատրաստված լինեն, իսկ այդպիսիներին տրված էր պատրաստել մեր երկրի գործարանական կեանքը հիւսիսի դպրոցներում աւարտած ուսանողների կազմից ամենօրեայ փորձեր և դիտողութիւններ անելով։

Մետալներից մարգանեցը և պղինձը երևացել են մեր երկրի զանազան մասերում ընդարձակ տարածութիւնների վրա և կազմում են լուրջ ձեռնարկութիւնների առարկայ թէ արտահանութեան և թէ գործարանական կիրառութիւնների համար։

Տարակոյս չը կայ, որ կովկասեան վիթխարի լեռնաշղթաների ծերպերում թաղնված են նաև ուրիշ մետալների մեծ պաշարներ, որոնք դեռ ևս չեն ստացել այն ընդարձակ նշանակութիւնը, ինչպէս վերև յիշվածները. բայց իրանց քանակը իւրաքանչիւր տարի աւելանում է աստիճանաբար։

Կովկասում վաղուց գտնված են և ոսկի, և արծաթ, և կօբալտ, և անդիկ, և երկաթ և բազմաթիւ ուրիշ մետալներ։ Հարցը այդ կողմից բոլորովին պարզ է։ Սակայն կարելի է գտնել աւելի զօրաւոր երակներ, քան մինչև այժմ յայտնագործված են և մշակված։

Մետալների հետ միաժամանակ կան մեծ քանակութեամբ հանքաբանական նիւթեր, իբրև խառնուրդներ, որոնց մշակումը կարող է ունենալ մեծ տնտեսական նշանակութիւն։

Քարածխի հանքեր կան շատ տեղերում, բայց նրանց շահագործութիւնը սպասում է դրամագլուխների և ուրիշ նպաստաւոր պայմանների, որոնք անհրաժեշտ են արդիւնագործութեան կանոնաւոր ընթացքի համար։

Ձկնային հարստութիւնները թէ Կասպիական ծովում և նրա մէջ թափվող Կուր, Արաքս և ուրիշ գետերի ջրերում, թէ Սև ծովում և թէ այնպիսի լեռնալճերում, ինչպէս են Սևանայ, Զալդըրի լճերը, իրանց բնորոշ առանձնայատկութիւններով բաւականաչափ գնահատված և պաշտպանված չեն։ Եթէ ձկնաբուծութիւնը դասախօսվէր բարձրագոյն դպրոցում, յարմարեցված մեր երկրի պայմաններին, այն ժամանակ մեր երկրում աւելի ու աւելի կը տարածվէին ձկնաբուծութեան վերաբերեալ գիտութիւններ, որոնց բացակայութիւնը ներկայումս այնքան նկատելի է մեր իրականութեան մէջ։

IX

Այն, ինչ որ կը մշակվի Կովկասում, կը փորձվի տեղական կեանքի մէջ և կանցնի գիտութեան բովքով բարձրագոյն դպրոցում, գործադրելի կը լինի նաև Պարսկաստանում և Թիւրքիայում և առհասարակ Առաջաւոր Ասիայում, որոնց ազգաբնակութիւնը հեղինակաւոր ցուցումների կարիք ունի իր տնտեսութիւնը բարւոքելու համար։ Ռուսաստանի սահմաններում գտնվող գիտական կենտրօնի ազդեցութիւնը տնտեսապէս և կուլտուրապէս կը մօտեցնի այդ երկիրները Ռուսաստանին, կառաջացնի արդիւնքների ընդարձակ փոխանակութիւն և կը ստեղծի տնտեսական կապ, որի իրագործութեամբ այնքան հետաքրքրված են մայրաքաղաքի ֆինանսական շրջանները, որոնք կազմակերպում են ծովաշրջիկ ցուցահանդէսներ ռուսական գործարանական և տնայնագործական արդիւնքների համար Մերձաւոր Արևելքի ջրերում։

Գործունէութեան նոր շրջանների նուա ման գործում տնտեսական և կուլտուրական աջողութիւն ունենալու համար անհրաժեշտ է մտաւոր կենտրօնի մշտական և հաստատ աշխատանք, մտաւոր մի գործիք, ո րը ուսումնասիրէր այս ու այն շրջանի կուլտուրական տնտեսական կեանքում ծա գող նոր պայմանները։ Այս դէպքում գի տութեան հաստատ կաթեդրան շատ կօգնէր ձեռնհաս շրջաններին՝ մշակելու տնտեսակա մի շարք խնդիրներ և մարդիկ կը պա րաստէր, որոնք օգտաւէտ լինէին իրագոր ծելու կուլտուրական արդիւնագործական ձեռնարկութիւններ։

Կարող էին հարց տալ, թէ միթէ նոյն հարցերի մշակութեամբ չէր կարող զբաղվել կաթեդրան և հիւսիսում։ Սակայն փաստերը մեր առջևն են. այդպիսի մշակութիւ համարեա թէ չը կայ և չի էլ լինի։ Ամե մի շրջան և նրա առօրեայ հոգսերը դնում են իրանց կնիքը հետազօտութիւնների ա ռարկաների վրա, գիտական աշխատանք ների ծաւալի և ուղղութեան վրա։

Մեր երկիրը կարօտ է մտաւոր աշխատաւորների, մեր պայմաններին տեղեակ մասնագէտների, զեմստվային գործողների։ Ներքին նահանգների բարձրագոյն դպրոցները, ճիշդ է, պատրաստում են մեր երկրի համար կուլտուրական ոյժերի խմբեր, բայց այդ երկրի առանձնայատկութիւնները, ինչպէս մենք ցոյց տուինք, կարիք ունեն այնպիսի պատրաստութեան, որը յարմարեցված լինէր մեր իրականութեան պահանջներին։

Բարձրագոյն դպրոցը կը ներշնչէ և կը հաստատէ մեր երկրում գիտական ոգի տարվում է չոր ու ցամաք և աննպատակ, մինչդեռ կեանքը ցոյց է տալիս, որ առանց այդ ձևի աշխատանքի էլ կարելի է լաւ խօսել և անսխալ գրել։

---

*) Տես «Մշակ» № 91.

Այն հանգամանքը, որ մեր գրականութիւնը ծաղկեց հայրենի վայրերից հեռու, օտար երեք կենտրոններում՝ Պօլսում, Թիֆլիսում և Վենետիկում, մեծապէս արգելք եղաւ ժողովրդի լեզուական գանձերից օգտվելու։

Մեր հեղինակներից և դասագիրք կազմողներից շատ քչերն են կարեւորութիւն տուել այդ բանին և աւելի թարգմանական օտար նիւթերից են հիւսել իրանց դասագրքերը, քան հայ կեանքի և լեզուի գանձերից։

Միայն Ղ. Աղայեանի դասագրքերն էին այդ պակասութիւնից ազատ և Մանդինեանի «Նահապետական և Հայրենի Աշխարհը», որոնք սահմանափակվում են ուսման միայն առաջին երեք տարիներով։ Մնացած տարիների համար ունենք «Հայ հեղինակներ», որոնք ազատ չեն մի մեծ պակասից՝ հարուստ հայ բնութեան և կեանքի ու աշխատանքի նկարագրից։ Տեսնենք, ինչպէս են աւանդվում բնագիտութիւնը, պատմութիւնը, աշխարհագրութիւնը, Փիզիկան և մաթեմատիկական առարկաները։ Իրանցի

(Կը շարունակվի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շիրվանզադէի յօբելեանի առիթով

Պեատիգորսկ, 28 ապրիլի

Ամսիս 23-ին ուսուցիչ Մարգարեանցի հրաւէրով ծխ. դպրոցում ժողով կար։ Օրակարգն էր՝ 1) ինչ կերպ մասնակցել վիպասան Թատերագիր Շիրվանզադէի 30-ամեայ գրական գործունէութեան տօնակատարութեան, 2) ընտրել մասնաժողով ծրագրելի հանդէսը գլուխ բերելու։

Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշվեց տալ մի ներկայացում և ամբողջ արդիւնքը ուղարկել յօբելեարին։

Նոյն երեկոն բանախօսվեց նրա գործունէութեան և կատարած դերի մասին հայ գրական ասպարիզում, տրվեցին կենսագրական տեղեկութիւններ և այլն։ Երեկոն ըստ ամենայնի շքեղ և պատշաճաւոր լինելու համար ընտրվեց մասնաժողով։

Ապրիլի 25-ին արտակարգ ծխ. ժողովը հանգուցեալ Ալ. Մանթաշեանի աճիւնին դիմաւորելու և դագաղի վրա պսակ դնելու համար ընտրեց մի պատգամաւորութիւն, որը ամսի 26-ի առաւօտեան Մինէրալնի կայարանում դիմաւորելով հոգեհանգիստ կատարեց և հասարակութեան կողմից պսակ դրեց բարերարի դագաղի վրա։ Կիրակի օրը կը կատարվի հոգեհանգիստ։

Մ. Մար.

Գիւղական ցաւեր

Շաղաս (Սևանի շրջ.), 25 ապրիլի

Մեզանում յունվար-փետրվար ամիսները չը տեսնված ձիւնեց և սար ու ձոր ծածկեց սպիտակ սաւանով։

Գարունը շատ ուշ բացվեց. ամեն մի կողմից թանգութիւնը տիրեց մեր խեղճ գիւղացուն. ցորենի և գարու պուդը 1 ր. 50 կ., խոտի խուրձը 20 կ.։ Թէպէտ այդքան թանգութիւն տիրեց, բայց գիւղացու համար ցաւ չէր. ցաւը այն էր, որ ամբողջ 8 ամիս 20%-ով փող վերցրեց աչքի լոյսի պէս ապրանքը կերակրեց, սպասեց, թէ վաղը գարուն կը գայ, արօրը կը լծէ, վար կանէ. բայց չը գիտէր, որ ցաւը շատ մօտ է. և տաւարացաւը սկսեց հնձել և լաւ հնձեց։ Կարծես մեր խեղճ գիւղացու ճակատագիրն է. տարի չէ անցնում, որ մի ցաւ չը լինի։

Գիւղի բոլոր երիտասարդութիւնը օտարութեան մէջն է անցկացնում իր օրերը, և 4—5 տարիներից ի վեր զրկված է հայրենիքից...

Ե. Գիւրջեանց

Մի տխուր էջ գիւղական դպրոցական իրականութիւնից

Գօրի, 28 ապրիլի

Երկու տարի սրանից առաջ Գօրու գաւառի Քախուրել հայաբնակ գիւղում Կ. Հ. Բ. Ընկերութիւնը բացեց ծխական միդասեան երկսեռ դպրոց և այդ դպրոցի համար առաջին տարին Ընկերութիւնը հրաւիրել էր ուսուցչի պաշտօնով Սողոմոն Նազարեանին, որը՝ չը նայած որ դպրոցի բացման առաջին տարին էր, բայց և այնպէս ուսումնական տարվայ վերջին ցոյց տուեց, որ մեծ աշխատութիւն է արել և, ինչպէս իրանք գիւղացիք պատմում են, ամեն միջոց և եռանդ գործ դրեց վիրախօս հայ երեխաներին հայերէն լեզու և կարդալ ու գրել սովորեցնելու համար, և եթէ նա մի քանի տարի մնար Քախուրել գիւղում, դպրոցը մեծ առաջադիմութիւն կանէր։ Բայց, դժբաղդաբար, ինչ-ինչ պատճառով 1910/11 ուսումնական տարվայ համար Ընկերութիւնը Նազարեանցի փոխարէն հրաւիրել է վարժուհու պաշտօնով մի ինչ-որ անփորձ տիկնոջ, որը թէև հայ քահանայի դուստր է և գիմնազիստուհի, բայց և այնպէս հայերէնից, ինչպէս ասում են, շատ բոբիկ է, հայերէն մի խօսք չէ իմանում, ուրեմն ոչինչ էլ չէ կարողանում սովորեցնել վիրախօս հայ երեխաներին։ Մենք միանգամայն ապշած ենք մնացել Կ. Հ. Բ. Ընկերութեան այդպիսի մի կարգադրութեան վրա. մի՞թէ Ընկերութիւնը, երբ հրաւիրում է մի վարժուհու հայոց դպրոցի համար, չէ տեսնում նրան կամ չէ խօսեցնում, թէ արդեօք հայերէն գիտէ՞ թէ ոչ։ Բանը վարժուհի հրաւիրելը և փողերը վճարելը չէ, այլ բանը նրանումն է, թէ արդեօք կոպէկ-կոպէկ հաւաքված փողերը, որ վճարում են, հասնում են իրանց նպատակին, թէ ոչ։ Մենք կարծում ենք, որ գիւղական հայ դպրոցների համար հարկաւոր է հրաւիրել լաւ հայերէն իմացող և փորձված վարժուհի կամ վարժապետ, որ կարողանայ հայերէն մի բան սովորեցնել երեխաներին և ոչ թէ Քախուրելի վարժուհու նմանը, որը ինքը դեռ կարօտութիւն ունի հայերէն սովորելու։ Ինչ և իցէ, այս մէկ տարին քախուրեցիք ի զուր կորցրին. գոնէ Բ. Ընկերութիւնը թող աշխատէ եկող 1911/12 ուսումնական տարվայ համար հրաւիրել հայերէն իմացող վարժուհի կամ վարժապետ. բայց աւելի լաւ կը լինէր, եթէ այդ բանը Ընկերութիւնը յանձնէր Գօրու ճիւղի վարչութեանը։

Ապրիլի 27-ին Գօրու հայոց դպրոցում կայացաւ հոգաբարձութեան և երեսփոխանների խառն ժողով, որը յոտնկայս յարգելով բարեգործ Ա. Մանթաշեանի յիշատակը վճռեց. 1) Թաղման օրը հոգեհանգիստ կատարել տալ ս. Աստուածածնի մայր եկեղեցում Գօրու հայ հասարակութեան ներկայութեամբ, 2) միևնոյն օրը ուղարկել ցաւակցական հեռագիր հանգուցեալի որդի Լևոնին։ Այսպիսի մի որոշում կայացրեց նաև Կ. Հ. Բ. Ընկերութեան տեղիս ճիւղի վարչութիւնը։

Երկարատև ձմեռը մի կերպ անցկացրինք, հիմա էլ ցուրտ գարունն է պատուհաս դառել գիւղացիների գլխին. ահա մայիսն էլ եկաւ, բայց և այնպէս դաշտերում և արօտատեղերում ցրտի պատճառով այնքան խոտ չէ բուսել, որ գոնէ ոչխարը արածէ։ Գիւղացիք տնային անասունների համար խոտ և դարման շատ ունեն, այնպէս որ այդ կողմից նեղութիւն չունեն. իրանց համար էլ հաց բաւականին ունեն, այդ կողմից էլ ապահով են։ Մեծ պասի վերջին օրերում եկած անձրևների պատճառով աշնանացանը շատ աջող բարձրացաւ, գարնանացանն էլ վնաս չունի. խաղողի այգիները և պտղատու ծառերն էլ շատ լաւ են, անձրևի կարօտութիւն դեռ ևս չը կայ. եգիպտացորենն էլ արդէն ցանված է. եթէ մայիս ամսում մի երկու անգամ անձրև գայ, մեր գիւղացիների քէֆին քէֆ չի հասնի։ Մեզանում ամեն բան էժան է. ոչ մի տարի այս ժամանակները այսպիսի էժանութիւն չէ եղած։

Մեսրովբ Մարութեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Գանձակ, 27 ապրիլի

Ամսիս 24-ին, հոգ. իշխանութեան կարգադրութեամբ նշանակված էր քաղաքիս ս. Յովհաննէս և ս. Լուսաւորիչ եկեղեցիներում կաթողիկոսական ընտրութեան վերաբերեալ 2-ական ներկայացուցիչների ընտրութիւնները։ Ս. Յովհաննէս եկեղեցու ծխականներից նոյն եկեղեցու դպրոցի դահլիճում երկրորդ և վերջին ժողովին ներկայ էին ընդամենը 43 հոգի։ Թեր և դէմ մտքերի փոխանակութիւնից յետոյ մեծամասնութեան կողմից ցանկութիւն յայտնվեց, որ ապագայ կաթողիկոսը լինի անպատճառ Ռուսաստանի հոգևորականներից։ «Ի՞նչ հարկ կայ, առարկեցին մի քանիսը, Թիւրքիայի եպիսկոպոսներից ընտրութիւն անել, քանի որ ներկայումս Էջմիածնում կան համեմատաբար պատկառելի դիրք ունեցող, փորձված, հին սերնդին պատկանող և թէ եւրոպական գիտութիւններով օժտված բարձրաստիճան երիտասարդ հոգևորականներ, որոնք աւելի շատ օգուտ կարող են տալ՝ թէ իրանց փորձառու հմտութեամբ, թէ գիտութեամբ և թէ պետական օրէնքների ուսումնասիրութեամբ, քան թէ Թիւրքիայից եկած և տեղական պայմաններին և օրէնքներին անծանօթ եպիսկոպոսները։ Փորձը ցոյց է տուել, որ առհասարակ Թիւրքիայից ընտրված կաթողիկոսները կանգնած չեն եղել իրանց բարձր կոչման և աստիճանի վրա, այլ ընդհակառակը գործիք են եղել շահագրգըռված զանազան խմբակների ձեռքին, որոնց անհեռատեսութեան շնորհիւ որոշ չափով տուժել է թէ ազգը և թէ եկեղեցին»։

Կային և այնպիսիները, որոնք առաջարկում էին խորութիւն չը դնել կաթողիկոսական թեկնածուների որտեղացի լինելու մէջ, աշխատելով ընտրել միայն արժանաւորագոյններից, և մատնանիշ էին անում մասնաւորապէս Թիւրքիայի հոգևորականներից Օրմանեանին։

Առհասարակ ներկայ եղողների մէջ տիրում էր այն համոզմունքը, որ այժմեան հոգևորականների շարքում, թէ Ռուսաստանում և թէ Թիւրքիայում, չը կայ այնպիսի մէկը, որ վայելէ ընդհանուրի սէրը և համակրանքը և ստանայ միաձայն քուէ։ Ռուսաստանի եկեղեցականներից յիշվում էին ժողովում կաթողիկոսական գահին համեմատաբար արժանի Սուքիաս արքեպիսկոպոսը, Կարապետ եպիսկոպոսը և Բագրատ վարդապետ Վարդազարեանը։

Ժողովի վերջում ձայների բացարձակ առաւելութեամբ իբրև ներկայացուցիչներ ընտրվեցին. 1) նահանգական բժիշկ Գրիգոր Տէր-Գրիգորեան և 2) հարկային տեսուչ Աղաջան Տէր-Սահակեանց։ Սրանք մայիսի 8-ին Գանձակի վիճակի գիւղերից եկած ներկայացուցիչների հետ միասին պէտք է ընտրեն երկու պատուիրակ, որոնք իր ժամանակին գնալով Թիֆլիս հոկտեմբերի 9-ին կը մասնակցեն թեմական պատգամաւորի ընտրութեան։

Սուրբ Լուսաւորչում ներկայացուցիչներ ընտրվեցին 1) բժիշկ Վահան Ադիբեկեանց և 2) Անդրէաս Սերեբրեակեանց։

Բոլոր չորսի ընտրութիւններն էլ աջող են, հետևաբար ցանկալի է, որ մայիսի 8-ի ժողովում Գանձակի վիճակի կողմից Թիֆլիս գնալիք երկու պատուիրակների ընտրվելը այդ չորսի միջից որոշվէր։

Գանձակեցի

Քութայիս, 1 մայիսի

Կիրակի, մայիսի 1-ին, պատարագից յետոյ, Գէորգ քահ. Սոլաղեան եկեղեցու բակում նորից հրաւիրեց ծխականներին ժողովի՝ երկու պատգամաւորի ընտրութեան համար, որոնք պէտք է մասնակցեն Թիֆլիսում թեմական պատգամաւորի ընտրութեանը։ Ծխականների մի մասը հեռացաւ եկեղեցու գաւիթից, իսկ միւս մասը, գիջելով Ա. քահ. Տէր-Իսրայէլեանցի խնդիրքին, մտաւ դպրոցական դահլիճը։ Գէորգ քահ. կարդաց կոնսիստորիայի հրամանագիրը և յայտնեց, որ քանի սա երկրորդ ժողովն է, պէտք է կայացնել ընտրութիւնը, չը նայելով ժողովականների քանակութեան։ Սկսվեց յուզմունք և աղմուկ։ Բանից երևաց, որ թղթով ժողովի հրաւիրել էին միայն մի որոշ մարդկանց։ Երկար վիճաբանութիւններից յետոյ՝ ծխականները նախ ցանկացան բողոք յայտնել և դէմօնստրատիվ հեռանալ դահլիճից, բայց աչքի առաջ ունենալով մի քանի սուբյեկտական հանգամանքներ, մանաւանդ այն, որ գիւղական պատգամաւորները պէտք է մայիսի 8-ին գային Քութայիս ընտրութեան համար՝ վճռեցին կայացնել ընտրութիւնը և միաձայն ընտրեցին Արշակ Թաղէոսեանին և Պետրոս Բաֆայէլեանին։

Ս. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը հեռագրում է քաղ. վարչութեան, որ ապրիլի 30-ին, ժողովրդ. լուս. մինիստրի նախագահութեամբ կայացել է համալսարանական հարցով զբաղվող յանձնաժողովի նիստը, իբրև նախնական նիստ։ Կովկասեան համալսարանի խնդիրը քննվելու է մայիսի 5-ին։ Խատիսեան աւելացնում է, որ Պետերբուրգում կողմնակից են, որ Թիֆլիսի համալսարանը առայժմ բացվի բժշկական ֆակուլտէտով։

✦ Ալ. Մանթաշեանի թաղման օրը, պատարագի ժամանակ, Ներսիսեան դպրոցի քառաձայն խմբի մէջ երգում էր իբրև սօլիստ նոյն դպրոցի աշակերտ Շարա Տալեանը։ Հանգուցեալ Ա. Մանթաշեանի որդիներից մէկը, ինչպէս մենք տեղեկացանք, լսելով վերոյիշեալ Տալեանի աջող ձայնը, խոստացել է նրան իր ծախքով ուղարկել որևէ կոնսերվատորիա՝ ձայնը մշակելու համար։ Բարեգործի այդ ցանկութիւնը արժանի է շնորհակալութեան, իսկ այդպիսի օրինակը իբրև բարի նախանձի առարկայ միայն կարող է ծառայել։ Տալեանը ունի նուրբ լսողութիւն և ազդու ձայն։

✦ Մուխրանեան փողոցի վրա, նորակառոյց կամուրջի վրայով էլեկտրաքարշի գծի աշխատանքները արագութեամբ առաջ են գնում։ Յոյս կայ, որ վագոնները այդ նոր գծի վրա երթեւեկեն մայիսի 15-ից։

✦ Առաջիկայ կիրակի օր, մայիսի 8-ին տեղի կունենայ մի զբօսանք «Սպորտ» կոչված այգում Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան օգտին։ Զբօսանքը ծրագրված է բազմազան զուարճութիւններով և խոստանում է լինել հետաքրքրական։ Պէտք է յուսալ, որ բարեգործական նպատակը՝ միացած գարնանային եղանակի հետ՝ կը գրաւեն հասարակութեան և կը տան վայելուչ հասոյթ Ընկերութեան դրամարկղին։ Նախօրօք տոմսակներ ստանալ ցանկացողները կարող են դիմել Ընկերութեան վարչութեան անդամներին։

✦ Մայիսի 1-ից Թիֆլիսի նահանգապետի դիւանատան մէջ խնդրագրեր ընդունելու և տեղեկութիւններ տալու համար նշանակված է բացառապէս ժամը 1-ից մինչև 2-ը ցերեկով։

✦ Թիֆլիս է եկել գիտական նպատակներով՝ Գիտութիւնների Ճեմարանի կողմից ակադեմիկոս Վերնադսկին, որ նայեց Բուսաբանական այգին։

✦ Մայիսի 1-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի վաճառականների ժողովը կովկասեան ապագայ բարձր կրթական հաստատութեանը նպաստելու հարցի համար։ Այդ օրը ուրիշ ընդհանուր ժողովների պատճառով շատ վաճառականներ բացակայ էին։ Եղածները ընդունեցին, որ այժմ, երբ համալսարան բանալու հարցը աւելի ռէալ հողի վրա է դրված, վաճառականութիւնը ևս իր սեպուհ պարտականութիւնը պէտք է համարէ նիւթապէս օգնելու գործի աջողութեան։ Ժողովում նոյնիսկ մի վաճառական, պ. Բ..ն տուեց իր լուման (500 ր.)։ Վերջ ի վերջոյ ժողովը որոշեց հեռագրել Խատիսեանին հետևեալը. «Թիֆլիսի վաճառականութիւնը կովկասեան համալսարանի համար տալիս է առայժմ 25,000 րուբլի»։

✦ Քաղաքային տնտեսական մասնաժողովը տաւարի մսի ֆունտը 13 կոպէկից դարձրեց 14 կ., իսկ ոչխարի մսի սակագինը մինչև յունիսի 1-ը վերացրեց բոլորովին։

✦ Թիֆլիսի գաւառի Սաբուէ գիւղում կախվել է Ֆէօդոր Նանիկաշվիլին՝ թոքախտ ունենալուն համար։

✦ Մայիսի 8-ին վրաց ազնուականութեան թատրոնի այգում տեղի կունենայ զբօսանք Վրաց Դրամ. Ընկերութեան օգտին։

✦ Թոյլատրված է աւտոմոբիլների հաղորդակցութիւն հաստատել Բորժոմի և Աբասթումանի միջև, Իգդիր կայարանի և Էջմիածնի կայարանի միջև, Երևան քաղաքի և Դարաչիչագի միջև։

✦ Մայիսի 18-ին, Միքայէլեան պրոս., բժ. Կարապետեանի այգում, կը լինի զբօսանք յօգուտ Կովկասեան Կանանց Ընկերութեան։

✦ Ապրիլի 30-ին Կ. Հ. Հրատ. Ընկ. ընդհանուր ժողովը, անդամների օրինական թւի բացակայութեան պատճառով, չը կայացաւ։ Երկրորդ ընդհանուր ժողովը նշանակված է մայիսի 8-ին, կիրակի օրը ցերեկվայ ժամը 11-ին, Կովկ. Հ. Բ. Ընկ. դահլիճում։

✦ Մայիսի 1-ին կովկասեան Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Ի. Ա. Վատացի, Բուսաբանական այգու վերատեսուչ Ա. Ռօլլօվի ուղեկցութեամբ այցելեց Վարոս Ղազանջեանի Օրթաճալայում նոր հիմնած այգեգործական և բանջարաբուծական տնտեսութիւնը, ուր լայն չափով մշակվում են արդիւնաբերական ամեն տեսակ վաղահաս բանջարներ. առանձին ուշադրութեան են արժանացել Ղազանջեանի ընդարձակ և տեխնիկայի վերջին խօսքի համեմատ շինած ջերմոցները։ Սենատոր Վատացին շատ գոհ է մնացել ողջ տնտեսութիւնից, որի առիթով բացատրութիւններ էր տալիս բանջարաբոյծ Վ. Ղազանջեանը։

✦ Էջմիածնից մեզ գրում են, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ Գէորգ արքեպիսկոպոսի կարգադրութեամբ Ալ. Յովհաննիսեան Մանթաշեանի թաղման օրը, շաբաթ, ապրիլի 30-ին, Էջմիածնի տաճարում պատարագից յետոյ, ներկայութեամբ ամբողջ միաբանութեան և բազմաթիւ ժողովրդեան, կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ։

✦ Գօրիից մեզ գրում են. «Շաբաթ, ապրիլի 30-ին, ս. Աստուածածնի մայր եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ ազգային բարերար Ալ. Մանթաշեանի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էին ծխական հոգաբարձութիւնը, Կ. Հ. Բ. Ընկերութեան ճիւղի վարչութիւնը, հայոց դպրոցի աշակերտ-աշակերտուհիները ուսուցչական կազմով միասին և խուռը բազմութիւն։ Հոգեհանգստից յետոյ հոգաբարձութիւնը ուղարկեց Մանթաշեան եղբայրներին հետևեալ հեռագիրը. «Գօրու հայոց դպրոցների հոգաբարձութիւնը հայ հասարակութեան հետ միասին կատարեց հոգեհանգիստ մեծ բարերար ձեր հօր յիշատակին և յայտնում է ձեզ իր ի խորին սրտէ ցաւակցութիւնը»։ Այսպիսի մի հեռագիր էլ ուղարկեց Կ. Հ. Բ. Ընկերութեան տեղիս ճիւղը։ Այս հեռագիրների պատճէնները ուղարկվեցին «Մշակի» խմբագրութեանը»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Մայիսի 2-ին, Թիֆլիսեցի 90 տարեկան Միքայէլ Տէր-Ստեփանեանը կեանքից ձանձրացած նետվեց Կուր գետը և մեռաւ։

✦ Մայիսի 2-ին, երեկոյեան, Թիֆլիսեցի Մնացական Մայիլեանցը մտնելով Զօպուրիի պանդոկը, կորզեց սեղանի վրայից մեծ դանակը և, դուրս գալով փողոց, այդ դանակով հարուածեց իրան ուժեղ կերպով և իսկոյն վայր ընկաւ։ Ճանապարհին նա մեռաւ։ Ինքնասպանութեան պատճառները յայտնի չեն։

✦ Նոյն օրը Պեսկովսկայա փողոցում № 32 էլեկտրաքարշի վագոնի տակ ընկաւ մշակ Համբարձում Յարութիւնեանը, որի կեանքը՝ ստացված ծանր ջարդուածքներից՝ վտանգի մէջ է։

✦ Նոյն օրը Թիւրքահպատակ Սօֆիա Կուրուղեանցը, Մողնու մօտով անցնելիս իրան վատ զգաց և ընկաւ։ Հիւանդանոց տանելիս նա մեռաւ։ Մահվան պատճառը անյայտ է։

✦ Մայիսի 2-ին, Վասիլի Կարմաէվը քաղաքապահ ոստիկան Սամոխվալէ Րէյզլէրի գլուխը ջարդեց քարով, երբ երկուսով դիմում էին ոստիկանատուն։ Յանցաւորը կալանաւորված է։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Տղամարդկանց և կանանց գաղտնի հիւանդութիւնների բժշկարան», մեդ. ֆելդշէր Ա. Եսայեանի։

Ժողովրդական բժշկական գրքեր գրելը վերին աստիճանի դժուարին ու պատասխանատու մի գործ է. հարկաւոր է մի առանձին տաղանդ՝ ժողովրդի հետ գիտութեան, այն էլ բժշկական գիտութեան մասին խօսելը։ Դժուարութիւնը հասկացել են բժիշկները։ Գուցէ այդ է պատճառը, որ այնչափ սակաւ են ժողովրդական գրքերը ռուս գրականութեան մէջ։ Ի հարկէ գրքեր շատ են գրվում, բայց երբ քննադատական աչքով ենք նայում, տեսնում ենք, որ նրանցից մի աննշան տոկոսը միայն արժանի է «ժողովրդական» ածականին։

Պիրօգովեան Բժշկական Ընկերութիւնը, որի հեղինակութեան առաջև պիտի խոնարհվել, ամենախիստ ընտրութիւններ է անում իրան ուղարկված գրքերի մէջ։ Հարիւրաւոր ժողովրդական բրօշիւրներից (բժշկական պարունակութեամբ) նա ամեն տարի ընտրում է մէկը կամ երկուսը և յանձնարարում է ժողովրդական ընթերցանութեանը։ Հարիւրաւոր ուրիշ՝ թէկուզ և տաղանդով գրված գրքերը՝ այդ Ընկերութիւնը անյարմար, նոյն իսկ վնասակար է յայտարարում։

Ամենամեծ պահանջը, որ յիշեալ Ընկերութիւնը անում է ժողովրդական բրօշիւրներից, այդ այն է, որ բժշկութիւն չը լինի, դեղատոմսեր չը լինեն։ Այդ սկզբունքը մոռանում է Ա. Եսայեանը։

Ա. Եսայեանը պարզ, սահուն լեզու ունի։ Նրա բրօշիւրները հեշտութեամբ կարդացվում են։ Ուստի և ցանկալի է, որ նա շարունակէ գրել։ Միայն թող ձեռք վերցնի դեղատոմսեր տալուց, և սահմանափակվի միմիայն առողջապահիկ խրատներով։

Դեղեր նշանակելու վնասների մասին ես շատ անգամ խօսել եմ։ Այդպիսի գրքերը յօնքը ուղղելու փոխարէն ժողովրդի աչքը կը հանեն։

Եթէ Ա. Եսայեանը ժողովրդի օգուտն աչքի առաջ ունի,—մի բան, որի մասին կասկած չը կայ,—նա չը պէտք է ժողովրդի ձեռը վնասակար ձեռնարկներ տայ։ Բժշկականութեան վերաբերեալ բրօշիւրներ գրողները պիտի հասկանան, որ ոչ միայն գիւղացի կիսագրագէտ մարդը, այլ և շատ համալսարանականներ հասկացողութիւն չունեն բժշկականութեան մասին։ Դժբաղդութիւնը հէնց նրանումն է, որ նրանք առաջ պառաւական դեղեր են գործածում և յետոյ միայն դիմում են բժշկի, երբ արդէն բանը բանից անց է կացել։ Ա. Եսայեանի յանձնարարած դեղերը, օրինակ սուսունակի դէմ միզուկի մէջ սրսկելու համար, հեշտութեամբ ամեն մէկը կարող է առանց դեղատոմսի ստանալ։ Ուրեմն նա կանի ու իր տունը կը քանդի։

Կնոջ սուսունակի վրա հեղինակը նոյնպէս շատ թեթև է նայում և դարձեալ դեղեր է տալիս։ Այն ինչ՝ սուսունակը յաճախ կնոջ համար յաւիտենական տանջանքների աղբիւր է դառնում, իսկ մանրադիտական

տեղական ուսումնասիրողների գործերում, գիտնական աւանդութիւններ և դիցաբանութիւններ մարդկանց մտքերում և հիմնարկութիւնների մէջ, կը գրաւէ հասարակական միտքը դէպի փորձնական կայարանների, գիտնական կաբինետների, լաբորատորիաների և զանազանատեսակ կուլտուրական ու կրթական հիմնարկութիւնների բազմացումը և կառուցումը մեր երկրում։

Թիֆլիսի բարձրագոյն դպրոցը կը լինի գիտութեան տաճար Կովկասի համար և միևնոյն ժամանակ լաւագոյն դպրոցներից մէկը կայսրութեան մէջ, դպրոց, որին վիճակված է ուրուագծել իր կաթեդրաների համար ընդարձակ ծրագիրներ՝ բաւարարութիւն տալու Ռուսաստանի թէ հիւսիսի և թէ հարաւի կարիքներին։ Այդ տաճարին նաև վերապահված է ստեղծել անդրկովկասեան ծայրերկրի համար կուլտուրական մի լուսապսակ, որը փայլի ի տես սահմանակից երկրի ազգերի, որոնք ոտք են դնում կուլտուրական ուղղութիւնների առաջին շաւիղների վրա*)։

X

Բարձրագոյն դպրոցը գործելու է պերճ և բնորոշ պայմաններով մի երկրում։

Մեր ալպիական լեռնաստանում մենք հանդէս ենք դնում Շվէյցարիայի և եւրոպական հիւսիսի տեսարանները։

Տաք շրջանների Չրաքբի հողերում մենք ներկայացնում ենք Եգիպտոսի և Ալժիրի կուլտուրաները։

Սև-ծովի ափերում մենք աճեցնում ենք Հնդկաստանի և Չինաստանի բոյսերը։

Մեր հնութիւնների, պեղումների, արձանագրութիւնների ընդարձակ շրջաններում մենք ունենք մեր Աթէնքը, Հռոմը, Բաբելոնը։

Դաղստանում և առհասարակ բոլոր Կովկասում մենք ցուցադրում ենք կենդանի ազգագրական ժողովածու ցեղերի, ազգերի՝ իրանց սովորոյթներով և լեզուներով։

Կենդանիների աշխարհում մենք տալիս ենք նմուշներ, որոնք յատուկ են և ծայրագոյն հիւսիսին և հարաւին։

Կլիմայի կողմից մենք առաջադրում ենք Րիվիերան Սև-ծովի ափերում, Շվէդիան և Նորվեգիան մեր լեռնաստանում։

Այսպէս է մեր երկիրը։

Այսպէս է բնութեան, պատմութեան և կուլտուրայի մեզ տուած իրականութիւնը։

Մեր երկիրը կը ծաղկի ճոխ և ընդարձակ կերպով, երբ գիտութիւնը լայն և խոր կը լուսաւորէ նրա բոլոր կուլտուրական սկզբնաւորութիւնները։

Գիտութեան բարձրագոյն տաճարը՝ խոր գիտակցված մի անհրաժեշտութիւն է։ Նա մեր կովկասեան ժամանակակից կեանքի անշեղելի հերթական հարց է. և Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութիւնը, որ գործում է մեր երկրի օգտին, վստահ եմ, որ կը միացնի իր ձայնը Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան միջնորդութեանը՝ հիմնելու բարձրագոյն դպրոց Թիֆլիսում։

---

*) Զեկուցանողը առաջ բերեց գործի ֆինանսական մասը և տեղեկութիւններ տուեց կովկասեան համալսարանի համար յատկացված գումարների մասին։ Այդ տեղեկութիւններից երևում է, որ միանուագ նուէրները թէ փողով և թէ հողով ունեն արժողութիւն 1½ միլիօն րուբլի, տարեկան հասոյթները 56,300 րուբլի։

կարծիքով՝ կանացի հիւանդութիւնների գուցէ 90%-ը չը բժշկված կամ վատ բժշկված սուսունակից է առաջանում։

Շանկրի բժշկութեան վրա հեղինակը նոյնպէս թիւր կարծիք ունի։ Ինչպէս պէտք է մի խեղճ բանւոր կամ նոյնիսկ ինտելիգենտ մարդ զանազանի կակուղ շանկը կարծր շանկրից (այսինքն սիֆիլիսից), երբ ամենամեծ մասնագէտները երբեմն սխալվում են։

Հեղինակը մի քանի երերուն նշաններով, որ ժողովուրդը անկարող է նկատել, ուզում է հասկացնել կակուղ ու կոշտ շանկրների տարբերութիւնը, և ամեն մէկի դէմ դեղեր է նշանակում։

Սա բժշկարանի տուած ամենավտանգաւոր խորհուրդներից մէկն է։ Մենք խնդրում ենք ընթերցողին իր փրկութեան համար երբէք չը ղեկավարվել այդ ցուցմունքներով, այլ անդամի վրա ամեն խոց երևալուն վազել մօտագոյ բժշկի մօտ, որովհետև, կրկնում ենք, նոյնիսկ ոչ մասնագէտ բժիշկն էլ անկարող է յաճախ այդ երկու տեսակի խոցերը զանազանել։ Դեղերը նշանակելով հեղինակը հաւաստիացնում է, որ «դրանք անպայման կը բժշկեն հիւանդութիւնը»։ Մի շատ միամիտ և պատասխանատու հաւաստիացում, որ ոչ մի բժիշկ չը պիտի թոյլ տայ իրան անելու...

Առ հասարակ հեղինակը աւելի վճռողական է իր կարծիքների մէջ և դեղերի օգտաւէտութեան մէջ, քան կանէր նոյն իսկ մի պրոֆեսոր։ Օրինակ՝ «սնդիկի սրսկումը աւելի նպատակայարմար է, քան քսումը»։ Կամ 606-ի մասին յայտնած կտրական կարծիքը թէ՝ «մի քանի օրվայ ընթացքում համարեա բժշկւում է սիֆիլիսը...»։

Հեղինակը երևի լաւ չէ հասկանում այն պատասխանատւութեան չափը, որ ընկնում է նրա խղճի վրա իր այսպիսի թեթև վերաբերմունքից դէպի մարդկութեան ամենակատաղի թշնամին՝ վեներական սիստերը։

«Բժշկարանի» մէջ մի քանի ուրիշ հիւանդութիւնների մասին ևս խօսք կայ։

Դրանց մէջ օնանականութեան մասին գրած գլխի վերաբերմամբ պիտի ասենք, որ լաւ կը լինէր, եթէ պարոնը հետևած չը լինէր հին հայեացքներին ու չը սարսափեցնէր ընթերցողին, և եթէ մի քիչ սիստեմատիկ լինէր շարադրութիւնը։

Վերջացնելով այս թռուցիկ քննադատութիւնը, մենք պարտք ենք համարում նորից զգուշացնել ընթերցողին, երբ օգտվում է այդպիսի գրքերից։ Բժ. Վ. Արծրունի

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԳՐՔԵՐ

1) Բէն-Հուր, վէպ քրիստոնէութեան առաջին օրերից, Lewis Wallace-ի, Թարգմ. Տիրայր վարդապետի, Թիֆլիս, 1911 թ., էջ 415, գ. 1 ր.։ 2) Արտիստը, Շիրվանզադէի, Թիֆլիս, 1911 թ., էջ 94, գ. 25 կ.։ 3) Խիկար իմաստուն (պղնձէ քաղաքի գրոյցներից), Մարգարի, Թիֆլիս, 1911 թ., էջ 36, գ. 10 կ.։ 4) Հայագիտութիւնն Արևմտեան Եւրոպայում (համառօտ տեսութիւն և գրացուցակ), Կ. Կոստանեանցի, Թիֆլիս, 1910 թ., էջ 182, գ. 1 ր.։ 5) Մի էջ Արղութեան օրիորդական դպրոցի պատմութիւնից, Կ. Կոստանեանցի, Թիֆլիս, 1911 թ., էջ 76, գ. 50 կ.։ 6) Հայերը Մօլդաւիայում եւ Բուքօվինայում (պատկերազարդ), Լևոն Բաբայեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 226, գ. 80 կ.։ 7) Ժամանակակից Եւրոպայի քաղաքական պատմութիւնը, Ա. գիրք, Անգլիա, պատկերազարդ, Շարլ Սեննօբօսի, Թարգմ. Մատթէոս վ., Վաղարշապատ, 1911 թ., էջ 160, գ. 50 կ.։ 8) Անդրկովկասի հողային պայմանները, Հ. Մուսայէլեանի, Վաղարշապատ, 1910 թ., էջ 74, գ. 20 կ.։ 9) Մկրտութիւն հայոց, վրաց, աղւանից եւ ալանաց սրբոյն Գրիգորէ, Թարգմ. Յուսիկ արքեպ., Վաղարշապատ, 1911 թ., էջ 138, գ. 50 կ.։ 10) Ուսումն աստուածպաշտութեան հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւ, պատկերազարդ, կազմեց Գր. ա.-ք. Երզնկեանց, Թիֆլիս, 1911 թ., էջ 122, գ. 50 կ.։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 3 մայիսի

Խնդրեմ թոյլ տաք «Մշակ» թերթի միջոցով յայտնել իմ խորին և սրտագին շնորհակալութիւնն ամենապատիւ սրբազան տեղակալին և այն բոլոր դպրոցական հաստատութիւններին, ընկերութիւններին, խմբագրութիւններին ու նրանց ներկայացուցիչներին, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանը և մանկավարժական խորհրդին, իմ ներկայ և նախկին աշակերտներին, բարեկամներին ու ընկերներին, որոնք անձամբ, ուղերձներով, նամակներով և հեռագրերով պատւեցին ու շնորհաւորեցին իմ 25-ամեայ մանկավարժական համեստ գործունէութեան յոբելեանը։

Առանձնապէս քաղցր պարտականութիւն եմ համարում երախտագիտական շնորհակալիքս մատուցանելու յոբելեանական կարգադիր յանձնաժողովի անդամներին, իրանց կրած նեղութիւնների համար։

Մ. Ասլեանց

Տ. ԶԱՔԱՐԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» № 62-ում տ. Սաթենիկ Զաքարեանի նամակը կարծում եմ, որ շատ շատերին կը յուզի։

Ի հարկէ եթէ տ. Զաքարեանը գոհ լինէր ի գիւղինից, ներէք այդ բողոքը չէր անի. բայց նրա յոբելեանը նոյնքան ուշադրութեան արժանի է, որքան թէ կատարված և թէ կատարվելիք յոբելեանները։

Ով գէթ մի փոքր ժամանակ եղել է գիւղում, նա լաւ գիտէ, թէ ինչ է նշանակում աշխատել գիւղական տգէտ մասսայի մէջ և թէ որքան մեծ նշանակութիւն ունի այնտեղ կրթված մարդու աշխատելը։

Նա այնտեղ և ուսուցիչ է, և բժիշկ, և գրագիր է և ամեն ինչ։

Ուրեմն ինչպէս կարելի է մի այդպիսի կարևոր աշխատաւորի չը վարձատրել, այն էլ 25 երկար տարիներ ծանր, կեանք մաշող աշխատանք տանելուց յետոյ։

Ապա ասում են՝ «մեր խեղճ գիւղը», «մեր չորքաշ գիւղացին», էլ ինչ վայնասուն ասես, որ չաղաղակեն գիւղի վերաբերեալ։

Ինչով պէտք է բարելաւէք և առաջ տանէք գիւղը։

Կարծում էք, մի քանի դասախօսութիւններով։

Կամ մի քանի օրվայ, կամ շաբաթվայ կուլտուրական փորձեր կատարելով։

Ոչ։

Փորձերը ցոյց տուին, որ դրանք ոչ մի հետևանք, համարեա, չեն թողնում։

Բայց ահա թէ ովքեր են գիւղը լուսաւորողը և կուլտուրապէս բարձրացնողները, տ. Զաքարեանի նման անձնաւորութիւնները, առանց որոնց մեր յարգելի ղեկավարները ոչինչ անել չեն կարող։

Ահա այսպիսի անձնաւորութիւններին պէտք է գնահատել, վարձատրել, հոգալ նրանց մարդավայել կեանքի համար, որպէսզի այդպիսիները ուրախութեամբ գնան, մնան այնտեղ և լծվեն գիւղի առաջադիմութեան գործին։

Այդպիսով միայն առաջ կը գնայ գիւղի կուլտուրական բարձրացումը. ուրիշ կերպ մի յուսաք, երբէք չէք հասնի ձեր նպատակին, և ի զուր են ձեր վայնասունները։

Օլգա Գենջեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիւրքաց ազգաբնակութիւնը ցաւում է, որ Ջաւիդ բէյը հրաժարվեց։ Հակկը փաշայի կաբինետը հազիւ թէ երկար ժամանակ մնայ իշխանութեան գլուխ։

◆ Սկիւտարում ներկայումս պառկած են շատ թիւրք օֆիցէրներ, որոնք վիրաւորվել են ալբանացիների դէմ մղված կռիւների մէջ։

◆ Սալոնիկից հեռագրում են, որ ալբանները չերնոգորցիների հետ միասին ամրակոծել են սահմանակից բերդերը, սակայն յետ են մղվել մեծ կորուստներով։

◆ Դուրձեալ չերնոգորցիներին մեղադրում են ալբան ապստամբներին գաղտնի կերպով զէնքեր հայթայթելու մէջ։

◆ Պեկինում նոր կաբինետը կազմվեց պրինց Ցինի գլխաւորութեամբ։ Զինւորական մինիստր մնում է Ին-չանգ, որ կողմնակից է արտաքին ակտիվ քաղաքականութեան։

◆ Պարսկաստանի շատ քաղաքներում ազգաբնակութիւնը մեծ նեղութիւն է քաշում հացահատիկի բացակայութիւնից։

◆ Նախագահ Տաֆտը դարձեալ վստահացրեց, որ Միացեալ-Պետութիւնները մեկսիկական գործերին միջամտելու դիտաւորութիւն չունեն։ Միևնոյն ժամանակ Տաֆտը նկատում է, որ ոչ մէկը մեծ պետութիւններից իր հպատակների ապահովութեան համար բարւոք չը տեսաւ դիմել Պետութիւնների հովանաւորութեան, այլ նախատեսեց գործել իր՝ Մէկսիկայում պաշտօնավարող ներկայացուցչի միջոցով անմիջապէս։

◆ Էլ-Պասօյից հեռագրում են, որ ապստամբները վերցրին Խուարէցը։ Կառավարական զօրքերը դիմեցին փախուստի։ Զօրահրամանատար գեներալ Մալա Նավարրօն անձնատուր եղաւ։

◆ Արևելեան-չինական երկաթուղագծի վրա շարունակվում են տեղեկութիւններ ստացվել մեծ թւով ռուս զօրքերի մասին, որոնք դիմում են դէպի Արևելք։

◆ Վլադիվօստօկից հեռագրում են, որ չին վաճառականները խոշոր կապակցութիւնների մէջ այլևս չեն մըտնում ռուսաց զինւորական մինիստրի գալուստից յետոյ, որպիսի հանգամանքը առիթ է տալիս շարունակվելու պատերազմի մասին տարածված լուրերին։ Չին առևտրականները ասում են, որ իրանք այդ անում են Պեկինից ուղարկված խորհրդի համաձայն։

◆ Չինական սահմանին մերձ ընկած գիւղերը չափազանց յուզված են պատերազմի մասին տարածված լուրերից։ Գտնվելով միանգամայն անպաշտպան դրութեան մէջ, գիւղական ազգաբնակութիւնը երկիւղ է կրում, որ պատերազմի դէպքում նա կենթարկվի չինական սահմանապահ զինւորների բռնութիւններին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

2 մայիսի

ՄԱԴՐԻԴ։ Պալատը ընդունեց պարտադիր զինւորական ծառայութեան նախագիծը, որ ընդունել էր սենատը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գրաւվեց Մերէժկօվսկիի «Պաւել I» գիրքը։

Նահանգական դատարանում երդուեալների մասնակցութեամբ սկսվեց իշխան Օգինսկիի կեղծ ժառանգութիւնը կազմելու մեծադղորդ գործի քննութիւնը։ Մեղադրվում են 11 հոգի, ի թիւս որոց տոհմական ազնուականներ Վօնլեար Լեանսկիները, հայր և որդի։ Վկաների թիւն է 199։ Հռոմա-կաթօլիկ միտրոպօլիտ Կլիւչինսկին ոչ յարգելի պատճառով դատարան չը գալու համար ենթարկվեց 25 ր. տուգանքի։ Մեղադրական ակտը կազմում է 100 երես, որի ընթերցումը աւարտվեց կէս գիշերին։

ԽԱՐԲԻՆ։ Եկաւ Գուչկօվը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Տարած տոմսեր. երկու հարիւր հազար—սէրիա 1469, № 34. հօթանասուն և հինգ հազար—1944/2. քառասուն հազար—644/26. քսան և հինգ հազար—1946/43. տասն հազար—2422/37, 7078/40, 7190/36. ութ հազար—9613/22, 15598/50, 15525/31, 9514/23, 14341/38. հինգ հազար—8020/47, 13680/11, 858/1, 2799/50, 7525/30, 1378/39, 4192/5, 5603/35. հազար—12214/16, 6891/4, 9719/41, 9583/48, 15726/28, 12680/12, 2137/34, 1242/13, 6014/11, 6121/18, 4182/27, 1454/49, 14569/41, 9921/10, 13802/9, 13394/47, 3265/18, 10472/48, 14438/12, 9034/44։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ № 2 գնացքը՝** 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.։ **Պօստաւոր № 4 գնացքը՝** 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 3 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.։ **Մարդատար № 6 գնացքը՝** 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.։ **Խառն գնացքը՝** IV կարգի վագոններով բառ հարկի կարեւորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր., Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօստաւոր № 74/75՝** 1 ժ. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երեւան մտնելու)։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղարկվում է Երեւան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երեւան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջեւան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ։ **Մարդատար-ապրանքատար № 78/79 գնացքը՝** 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ՝ Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան, 9 ժ. 45 ր. առաւ., Երեւան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ **արագ. № 1 գնացքը՝** 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ։ **Պօստաւոր № 3 գնացքը՝** 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում՝ 12 ժ. 35 ր. գիշ.։ **Մարդատար № 5 գնացքը** 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր. երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.։ **Խառն գնացքը** IV կարգի վագոններով բառ հարկի կարեւորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան։

ԲՈՐԺՈՄ՝ **մարդատար № 7/8 գնացքը՝** 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.։ **Մարդատար № 9/10 գնացքը՝** 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար № 5 գնացքը՝** 4 ժ. 25 ր. ցերեկ.։ **Պօստաւոր № 3 գնացքը՝** 9 ժ. 52 ր. առ.։ **Արագ № 1 գնացքը՝** 10 ժ. 24 ր. երեկ.։ **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստաւոր № 72/73 գնացքը՝** 7 ժ. 38 առաւօտ.։ **Մարդատար-ապրանքատար՝ № 80/81 գնացքը՝** 1 ժ. 26 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ № 2 գնացքը՝** 8 ժ. 52 ր. առաւօտեան։ **Պօստաւոր № 4 գնացքը՝** 11 ժ. 40 ր. գիշ.։ **Մարդատար № 6 գնացքը՝** 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ **Մարդատար № 9/10 գնացքը՝** 9 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար № 7/8 գնացքը՝** 7 ժ. 18 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագոնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռօստով, միայն վճարելով պլացկարտի գինը։

Մայիսի 15-ից սահմանվելու է արագ գնացքներում անմիջական հաղորդակցութիւն առանց վագոն փոխելու Թիֆլիս-Բագու-Կիսլօվօդսկ միայն **միեւս** վագօնով (I և II կարգի)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆՍԵԱՆ—10—11 ժ. մարկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—45

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վէլեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. Չ.) 416. 100—3

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(օ. մ.) 1179. 100—88

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների
Սիֆիլիսի բժշկութիւն Էրլիխի «606»-ով
Ընդունելութիւնը ամեն օր (12½—2 ժ. ցերեկվայ։ (5—7 ժ. երեկոյեան։ (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Հասցէն (Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33. (Сололаки, уголъ Бебутовской и Паскевича 33.
(Չ.ու.Կ.) 1134. 100—92

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
«Խօլերայի մասին» . . . 5 կ.
«Դպրոցական առողջապահութիւն» (պատկերազարդ) . . . 50 կ.
«Առողջ երեխաների խնամատարու-թիւն» . . .
«Սիֆիլիս, կակուղ շանկր, սուսունակ» 25 կ.
«Թշուառների բարեկամ բժիշկ Հաաս» 25 կ.
«Աղջիկ» (առողջ. և բարոյագիտ. էտիւդ) 20 կ.
№ 1. «Մի՛ խմիր» երկ. տպ. (նկ.) 75 կ.
№ 2. «Վարակիչ հիւանդութիւնները և նրանց թոյնը», 23 նկարով 15 կ.
№ 3. «Թոքախտ կամ բարակացաւ» (նկ.) 15 կ.
№ 4. «Դողերոցք կամ մալարիա» (նկ.) 10 կ.
№ 5. «Ինֆլուէնցիա կամ ձողացաւ» (նկ.)
№ 6. «Նորածին մանուկների հիւանդութիւնները» (նկ.) . . 5 կ.
№ 7. «Ցդի կնոջ առողջապահութիւնը»
№ 8. «Մանկիկ» . . . 40 կ.
Դիմել՝ Тифлисъ, Книж. маг. «Гуттенбергъ»
ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ 1911 Թ. ԳՐԱՑՈՒՑԱԿ ՅԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ
412. 2—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ համար
հարկաւոր է
հայոց և ռուսաց լեզուներին տիրապետող պաշտօնական գործավարութեան լաւ ծան-
ՔԱՐՏՈՒՂԱՐ
Ռոճիկն է տարեկան 720 ր.։
Դիմել՝ Ալէքսանդրօպօլ, Հոգևոր Կառավարութեան։ (ա.օ.) 458. 4—2

Լոյս տեսաւ
և վաճառվում է «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում
Սիմէօն Յակոբեանի
ՇԻՐՎԱՆԶԱԴԷ
Գրական-քննադատական վերլուծութիւնը
Գինն է 80 կոպէկ
Դիմել՝ Тифлисъ, книж. маг. „Гуттенбергъ“, Г. И. Галустяну.
1911 թ. գրացուցակը ուղարկվում է ձրի
(Չ. Չ.) 447. 3—2

GLYCEROPHOSPHATE
GRANULE
ROBIN

ԳԼԻՑԵՐՕՖՕՍՖԱՏ ՌՕԲԷՆ'Ի
ՀԱՏԻԿԱՒՈՐ
ԳԼԻՑԵՐՕՖՕՍՖԱՏ ԿՐԻ եւ ՍՕԴԱՅԻ
Միակ խիտացված ֆօսֆատ
ԱՄՐԱՑՆՈՒՄ Է ՋՂԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ
Գործածվում է պարիզեան հիւանդանոցներում։
Արագ ներգործում է ՆԵՎՐԱՍՏԵՆԻԱՅԻ և ՄՏԱՒՈՐ ՅՈԳՆԱԾՈՒԹԵԱՆ ժամանակ, ՌԱԽԻՏԻ դէմ, ոսկորների բաղդրիքան դէմ՝ մանկան ատամն, յղութեան եւ սնուցման շրջանում, եւ այլն։
Լաւ համ ունի։ Ընդունվում է ջրով կամ կաթով։
Շաքարախտաւորների համար պատրաստվում են լեպէշկաներ։
Վաճառվում է դեղատներում եւ դեղատնային խանութներում։
(Չ.) (М. 152627) 334. 12—3

ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԳՐԱՄՕՖՕՆ“
ԿՈՎԿԱՍԻ ԵՒ ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Թիֆլիսում, Գօլովինսկի պր. № 9.
ԿԱՐԵՒՈՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ!
ԲԱՒԱԿԱՆԱՉԱՓ ԷԺԱՆԱՑՎԱԾ ԵՆ ԳՆԵՐԸ ԳՐԱՄՄՕՖՕՆԱՅԻՆ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ
«ՓՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ»
մարկայով—
ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ ՆՈՐ ԳՆԵՐԸ.

	ր.	կ.
10″ սեւ էտիկէտով, երկկողմ	2	—
12″ » »	3	—
7″ շագանակագոյն »	—	75
10″ » »	1	50
12″ » »	2	—

Օգտվեցէք առիթից և շտապեցէք «ԳՐԱՄՄՕՖՕՆ» ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խանութը։
Պահեստում կան ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ՝ ռուսերէն, մօլօրուսերէն, պարսկերէն, թուրքերէն, հայերէն, վրացերէն և այլ օտար լեզուներով։
Բոլոր մեր պլաստինկաները կարելի է ստանալ թէ մեր խանութում և թէ երաժշտական գործիքներ վաճառող բոլոր առաջնակարգ խանութներում։
ՁՐԻ ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԿԱՏԱԼՕԳԸ ԵՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿԸ։
(Կ. Չ.) 164. 20—18

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.